№ 195 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8 — 1906 — ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8 № 195

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Միքայէլեան պրոսպ. № 24/4 տանը գտնվող
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ եւ ԱՆԳԼԻԵՐԷՆ
ԼԵԶՈՒՆԵՐ են սովորեցնում 8 ամսում տեսական և գործնական զբաղմունքների միջոցով. ամսական 5 րուբլի: Ընդունելութիւնն ամեն օր 4—7 ժամը:
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ատ.) 3—10

Յուլիսի 1-ից
ԲԱՑՎԱԾ Է
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
„ՊՕՂՈՍԵԱՆՆԵՐԻ“
Արմեանսկի-բազար տուն Զուբալաձէի 2-րդ յարկ
Վաճառվում են ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքներ մեծ քանակութեամբ և Թոփով շատ մատչելի գներով:
ատ. Շ. Հ. 6—20

ԳԻՄՆԱԶԻՍՏԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԳԻՇԵՐՕԹԻԿ
վճարը ընդհանուրին մատչելի է: Պրակտիկա ֆրանսերէն լեզուից, ցանկացողների համար — մուզիկա: Աշակերտուհիների պատրաստելը մինչև 4-րդ դասատուն: Առողջարար սարի օդ. հանգիստ տեղ: Դավիդովսկի հրապարակ, տուն Գամրեկելի № 4, Մ. Քրիստոփայեան: (Ն. Հ. Կ.) ատ. 3—3

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
և
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ
Ընտանիքներում
Ա. Մ. ԵԶԵԿԵԱՆ
Հասցէն բանակցութեան համար՝ Ул. Петра Великаго (бывш. Лабораторная) № 21:
ատ. 3—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնելով, որ նա ձեռնարկել է Միքայէլեան փողոցի երկարութեամբ չափած, բոլորակ այն քարերի հաստատելու գործին, որոնք ցոյց են տալու Միքայէլեան փողոցի կենտ համարներ ունեցող տների առաջ ընկած սալայատակների լայնութիւնը և բարձրութիւնը (աջակողմեան մասը, ուր գտնվում է «Վէտցէլ» հիւրանոցը), խնդրում է յիշեալ տների տէրերին անմիջապէս սկսել իրանց տների սալայատակների վերանորոգութիւնը—համաձայն վարչութեան տուած ցուցմունքների: Ընդ սմին վարչութիւնը յայտնում է, որ սալայատակների վերանորոգման ամենավերջին օրը լրանում է այս տարվայ հոկտ. 5-ին, որից յետոյ վարչութիւնը կը ցուցակագրէ ներկայ պահանջը չը կատարող տանտէրերի ազգանունները: Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ թոյլատրված է բացառիկ դէպքերում երկրորդական փողոցների մայթերը սալել ճալաքարով (булыжный), և ուշադրութեան առնելով Նախալօվկայի, Լոտկիս Գորի և Հալաբարի տանտէրերի խնդիրքը, քաղաքային վարչութիւնը հրաւիրում է նրանց՝ անմիջապէս շինել գոնէ ճալաքարի մայթեր: Այսպիսիների բացակայութիւնը պատճառ է դառնում փողոցների փչանալուն և շատ է դժուարացնում ոտքով երթևեկութիւնը:
(ատ.) 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ ազգային կալուածքների մասին. Վերջին տեղեկութիւններ. Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան կազմակերպութիւնը. Վերին Ղափանի Թուրք հայկական կռիւը. Համաշխարհային խաղաղութեան 15-րդ կօնգրէսը Միլանում. Երիտասարդ-Թիւրքական մի նոր կուսակցութիւն. Կուսակցութիւնների կեանքից. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակներ խմբագրութեան. Իմ պատասխանը. Նամակ Բագուից. Բարոյական սնանկութիւն. Թատրոն և երաժշտութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Պարսկաստանից. Նամակ Անգլիայից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԴԱՐՁԵԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

VII

Պետերբուրգում Պետական Դումայի ագրարային յանձնաժողովում ուրիշ հարցերի շարքում հարց էր ծագել նոյնպէս հայ եկեղեցական կալուածների բնաւորութեան մասին:

—Ի՞նչ կալուածներ են դրանք, արդեօք վանական կալուածներ այն մըտքով, ինչպէս են ռուսաց վանական կալուածները, թէ բոլորովին տարբեր էութեամբ:

Յանձնաժողովի անդամների մեծագոյն մասը հակված է լինում նայել այդ կալուածների վրա, ինչպէս ռուսաց վանական կալուածների վրա. բայց մի քանի պատգամաւորներ աշխատում են ապացուցանել, որ հայ եկեղեցական կալուածները ուրիշ բնաւորութիւն ունենն և ծառայում են իրանց արդիւնքներով կրթական և կուլտուրական նպատակների:

Եւ թէև ագրարային յանձնաժողովը ոչ մի վերջնական հայեացք չէ մշակում հայ կալուածների մասին, բայց որոշում է ընդհանուր վանքական հողերի շարքից հանել նրանց առանձին քննութեան համար:

VIII

Ռուսաց վանքական կալուածների վերաբերութեամբ ագրարային յանձնաժողովը որոշել էր նայել նրանց վրա իբրև պետական հողերի վրա և առանց այլևայլութեան խլել նրանց վանքերից ու յանձնել գիւղացիներին, առանց որևէ վարձատրութիւն տալու վանքերին:

Եթէ ռուսաց վանքական հողերը նկատվել են իբրև պետական հողեր, դա դեռ չէ նշանակում, թէ նոյն տեսակ պէտք էր նայել հայ եկեղեցապատկան հողերի վրա: Այստեղ կայ մի բարդացնող հանգամանք:

Բանն այն է, որ հայ եկեղեցական կալուածների և Պետական Դումայի միջև կայ մի ուրիշ մարմին: Դա հայ ժողովուրդն է: Կալուածները պատկանում են այդ ժողովրդին, որը օգտվում է այդ կալուածներից իր կրթական և կուլտուրական ձեռնարկութիւնները պահպանելու և ապահովելու համար:

Այստեղ վանքերը չեն հողի տէր ու անօրէն հանդիսացողները, այլ ժողովուրդը իր ամբողջութեամբ: Իսկ դա էական կէտ է:

IX

Եթէ հայ ժողովուրդը ունենար ինքնավարական մի որևէ կազմակերպութիւն և ազգային սեփականութիւններ, այն ժամանակ մեր բոլոր վանքական և դպրոցական կալուածները կը ճանաչվէին իբրև այդպիսի սեփականութիւններ:

Մենք չունենք ինքնավարութիւն, բայց ունենք նրա տարրերից մի քանիսը: Եւ ահա մեր յիշած կալուածները ներկայանում են իբրև հայ ժողովրդի ամբողջութեան ստացուածքը:

Գուցէ հայ ժողովուրդը քննելով բոլոր ժամանակակից հանգամանքները կարող էր հրաժարվել այդ կալուածներից, ինչպէս պնդում էին մեզ հակառակողները կենտրոնական ժողովում, բայց նա նախօրօք պատրաստված չէր այդպիսի հարցի լուծում տալու համար և համապատասխան լիազօրութիւններ չէր տուել իր ներկայացուցիչներին:

Եւ ժողովը ապացոյց տուեց այն բանին, որ հարցը ամենևին մշակված ու պարզ չէր ժողովրդի համար, չէր կարող լուծվել այն իմաստով, ինչպէս աշխատում էին լուծել մեզ հակառակողները:

X

Պատգամաւորներից մի քանիսը (օրինակ Հ. Օհանջանեանց), տալով հողը ձրիաբար գիւղացիներին, կարևոր էին համարում սահմանել դիֆֆերենցիալ րենտա, կամ ուրիշ խօսքով տարբերութեան տուրք: Դա նշանակում է, որ գիւղացիները պէտք է վճարեն Էջմիածնին որոշ տուրք, որը այնքան մեծ պէտք է լինի, որքան տեղական պայմանները նըպաստաւոր են տնտեսութեան արդիւնաբերութեան համար:

Եւ այդպիսով պէտք է սահմանվի մի մշտնջենական տուրք, որ պէտք է վճարէ գիւղացին Էջմիածնին, յոյս չունենալով երբևիցէ ազատվել այդ պարտաւորութիւնից: Իսկ միւս կողմից մի՞թէ խելացի մի բան կը լինէր, որ Էջմիածնապատկան գիւղացին վճարէր մի տուրք, որը չէ վճարում նրա հարևան պետական գիւղացին:

Տարբերական տուրքի առաջարկը անժամանակ, անմշակ մի առաջարկ էր, որը պարզ չէր նոյն իսկ նրան առաջ մղողների համար: Իսկ կաշուից դուրս էին գալիս հապճեպ որոշումներ կայացնելու:

XI

Մեզ կարող են ասել, թէ գուցէ յեղափոխական ոգին յանկարծ այնքան ուժեղացաւ Ռուսաստանում, որ կարող եղաւ միանգամից վերջ տալ ամեն տեսակ սեփականութիւնների և հրատարակել հողը իբրև ամբողջ պետութեան կամ նրա մէջ ապրող համայնքներին պատկանող բարիք:

Գուցէ:

Սակայն դա մի «գուցէ» է, որը չէ կարող այժմ ուղեցոյց լինել հասարակութեան գործնական ձեռնարկութիւնների համար:

Եթէ մի օր կը բռնկվի մի այդ տեսակ յեղափոխութիւն և բաւականաչափ ուժեղ ու հեղինակաւոր կը լինի, այն ժամանակ այլևս ինչ խօսք կարող է լինել: Սակայն բնական է մտածել, որ և այն ժամանակ միջոցներ ձեռք կառնվէն ապահովելու այն կրթական և կուլտուրական ձեռնարկութիւնները, որոնք պահպանվում էին մեր կալուածների եկամուտներով:

Մենք, յամենայն դէպս, չենք կարող այդպիսի պատեհականութեան դիտումով վտանգի ենթարկել այն, ինչ որ դեռ մեր ձեռքումն է, մեր տրամադրութեան տակ:

XII

Վերջացնելով մեր խօսքը, կանգ առնենք և մի թիւրիմացութեան կամ տհաս մտածողութեան վրա:

Մեզ հակաճառող պարոնը կարծում է, որ նրա տեսակէտը սօցիալիստական է, իսկ մերը բուրժուական:

Իսկ ինչ կասէ նա, եթէ մենք յիշեցնենք պարոնին, որ սօցիալիստ Ժօրէսը ամենևին այն կարծիքին չէ, թէ պէտք է բռնի կերպով խլել հողը նրա տէրերից առանց նրանց վարձատրելու, և նա կուսակից է այն ծրագիրներին, որոնք կարողութիւն են տալիս պարլամենտական ճանապարհով բարեկարգել հողային գործը՝ համայնացնելով հողը և բաւարարութիւն տալով նրա տէրերին:

Սօցիալիստ և բուրժուա խօսքերը գործածելուց առաջ պէտք է նրանց հասկանալ: Իսկ վայրիվերոյ դատողութիւններ անելը առանց ըմբռնելու բանի էութիւնը—կարող է աջողութիւն ունենալ միայն թերուսների շրջանում: Այնտեղ և այնտեղ միայն հունձ ունէք վերցնելու:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, սեպտեմբերի 6-ին

Տասը շաբաթվայ գործադուլից յետոյ Ռոտշիլդի նաւթահանքերում աշխատանքները վերսկսվեցին: Բիբի-Էյբաթում գործադուլ են արել միայն Ռոտշիլդի բանւորները: Բալախանում՝ միացած բոլոր նաւթահանքերում՝ աշխատում են:

(Հեռ. Գործ.)

—

Մօտ օրերս, ինչպէս յայտնի է, Եւլախ-Նուխու ճանապարհին Նուխուց գնացող ճանապարհորդների վրա յարձակվել է մի աւազակախումբ: Աւազակները շատերին կողոպտել էին, իսկ երկու երիտասարդ մարդկանց—Խօջամիրեանցին և Միքայէլեանցին գերի էին վերցրել: Այդ առիթով Նուխուց սեպտեմբերի 2-ին հաղորդում են, որ նոյն օրը երեկոյեան մի անձ եկաւ Միքայէլեանների խանութը մի նամակ է գցել, որի մէջ գերիները գրում են. «Մեզ հետ քաղաքավարի են վարվում և լաւ են նայում. խընդրում ենք չը յայտնել իշխանութիւններին, հակառակ դէպքում հետևանքները վատ կը լինեն: Աշխատեցէք շուտով վճարել պահանջված գումարը և ազատել մեզ անտանելի վիճակից: Վանդուկ և Սաշա: Ուղարկած 1000 րուբլին հետ է ուղարկված. աւելի են պահանջում»:

«Or.»

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ-ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը կազմվել է արտասահմանեան «Освобожденіе» թերթը հրատարակող «Ազատութեան դաշնակցութիւն»-ից և զեմստվային-սահմանադիր համագումարներից: Այս երկու կազմակերպութիւններն էլ գոյութիւն ունէին մի քանի տարի շարունակ և նրանք տուին նոր կազմվող կուսակցութեան և գլխաւորապէս նրա կենտրոնական կոմիտէտին՝ երկար տարիների ընթացքում սահմանադրութեան համար մարտնչող, փորձված ու արի հերոսների մի հոծ շարք. կուսակցութիւնը դրվեց հաստատուն հիմքի վրա:

Կուսակցութեան գերագոյն ղեկավարիչ և կարգադրիչ կուսակցական համագումարները ժողովվեցին երեք անգամ:

1905 թ. հոկտեմբերի կէսերին Մոսկվայում կայացած կուսակցութեան հիմնադիր համագումարը շատ սակաւամարդ էր, այդ իսկ ժամանակ շարունակվող երկաթուղային գործադուլի պատճառով:

Հոկտեմբերի 17-ի մանիֆէստը գտաւ այս համագումարի անդամներին աշխատելիս իշխ. Դօլգորուկովի տան՝ ժամերով դժգոյն լուսաւորված բնակարաններում, որովհետև ելեկտրական կայարանում գործադուլ էր:

Յետագայ երկու համագումարները կայացան Պետերբուրգում և շատ բազմամարդ էին: Երկրորդ համագումարը տեղի ունեցաւ յունվարին, ընտրողական կրակոտ շրջանում, և երրորդը՝ ապրիլին, հէնց Պետական Դումայի բացումից առաջ, երբ կուսակցութիւնը համայն երկրում փառաւոր յաղթանակ տարաւ: Չորրորդ համագումարը պէտք է կայանայ Պետերբուրգում, սեպտեմբերի 8-ին *):

Համագումարների անդամները պատգամաւորներ են ընտրվում գաւառական, նահանգական և քաղաքային կոմիտէտներից, կենտրոնական կոմիտէտի մշակած և համագումարի ընդունած սիստեմով, որով պատուիրակների թիւը համեմատական է նրանց ներկայացրած խմբակների չափին: Անկախ կուսակցական համագումարներից, երբ կենտրոնական կոմիտէտը հարկ է համարում իմանալ գաւառական խմբակների տրամադրութիւնը որևէ հարցի նկատմամբ, գլխաւորապէս տակտիքական հարցերը մշակելու ժամանակ, կոմիտէտին կից տեղի են ունենում տեղական խմբակների ներկայացուցիչների խորհրդակցութիւններ:

Կուսակցութեան համագումարներ հրաւիրող, սրանց համար զեկուցագրեր պատրաստող ու որոշումները գործադրող և կուսակցութեան ամբողջ բարդ կեանքը մինչև համագումարների կայանալը ղեկավարող, գործադիր գըլխաւոր մարմին՝ կենտրոնական կոմիտէտը կուսակցութեան սկզբներում բաղկացած էր 30 անդամներից, իսկ այժմ նրա անդամների թիւը 50-ի է հասնում:

Կենտրոնական կոմիտէտը ունի երկու քարտուղարութիւն, մէկը՝ Պետերբուրգում, միւսը՝ Մոսկվայում, և մայրաքաղաքներից իւրաքանչիւրի մէջ տեղի են ունենում այդ մայրաքաղաքում ապրող կոմիտէտի անդամների նիստերը, որով կենտրոնական կոմիտէտի Պետերբուրգի և Մոսկվայի բաժանմունքների ֆունկցիաները խիստ սահմանագծված են:

Ամիսը մի անգամ, իսկ երբ հարկաւոր է և յաճախ, տեղի են ունենում կենտրոնական կոմիտէտի լիակատար ժողովները:

Կենտրոնական կոմիտէտի Նախագահն է իշխ. Պաւ. Դիմ. Դօլգորուկովը. սրա ընկերներն են՝ Պետերբուրգի բաժանմունքի—Պ. Ն. Միլիւկովը և Ա. Ա. Մուխանովը, իսկ Մոսկվայի բաժանմունքի—Ն. Վ. Տեսլենկոն: Կուսակցութեան քարտուղար սկզբում իշխ. Դ. Ի. Շախովսկին էր, իսկ այժմ Ա. Ա. Կօրնիլօվն է: Բացի դրանից կուսակցութեան քարտուղարութեան կազմի մէջ մտնում են Պետերբուրգում Ն. Ն. Ջերնենկօվ և Ա. Մ. Կօլիւբակին և Մոսկվայում—Ն. Մ. Իորդանսկին: Կենտրոնական կոմիտէտին կից գործում են մի քանի մասնաժողովներ. կայ առանձին ֆինանսական կօմիտէտ և գանձապահ: Ի նկատ առնելով կենտրոնական կոմիտէտի անհագին նշանակութիւնը կուսակցութեան կեանքի մէջ, մենք այստեղ կը թւենք այդ կոմիտէտի բոլոր անդամներին. դրանք են՝ Ակչուրին, Վասիլեվ, Վերնադսկի, Վինավէր, Վիկօվսկի, երկու Հէսսեններ, Գօլօվին, երկու իշխան Դօլգորուկովներ, Իզգօեվ, Կամինկա, Կիզեվէտտէր, Կիշկին, Կոկոշկին, Կօլիւբակին, Կոմիսարով, Կորնիլով, Կուտլերէվսկի, Լէոնիցկի, Լոմշակով, Լուչիցկի, Մակլակով, Մակսիմով, Մանդէլշտամ, Միլիւկով, Մուրոմցէվ, Մուխանով, Նաբոկով, Նովգորոդցեվ, Պետրաժեցկի, Պետրունկէվիչ, Պրոտոպոպով, Դէ-Ռոբերտի, Ռոդիչեվ, Սաբաշնիկով, Ստրուվէ, Տեսլենկո, Տիրկով, Ջերնենկով, Ջուբինսկի, Շախմատով, իշխ. Շախովսկի, Շերշենէվիչ, երկու Շչէպկիններ, Եակուշկին:

Տեղական քաղաքային և նահանգական կոմիտէտների ցանցը տարածված է ամբողջ Ռուսաստանում. կոմիտէտներ կան Անդրկովկասում և Միջին-Ասիայի ու Սիբիրի նշանաւոր քաղաքներում: Մեծ քաղաքներում, բացի կենտրոնական քաղաքային կոմիտէտներից, կան նաև րայօնական կոմիտէտներ: Մոսկվայում, օրինակ, կան 17 կոմիտէտներ: Նահանգական կոմիտէտները միացնում են այն գաւառների գաւառական կոմիտէտներին, ուր այդպիսիները կազմակերպվել են արդէն: Վերջին ժամանակներս կոմիտէտները սկսեցին զարգանալ գործարանային շէներում և մեծ գիւղերում, ինչպէս և զարգացան շրջանային կոմիտէտները, որոնք իրանց հերթին մտնում էին գաւառական կոմիտէտների մէջ: Բոլոր ինստանցիաներում գոյութիւն ունի ընտրողական սիստեմ.—գաւառական կոմիտէտների անդամները ընտրվում են կուսակցութեան գաւառական անդամներից, իսկ նահանգական կոմիտէտը ընտրվում է համանուն նահանգի գաւառական և քաղաքային կոմիտէտների անդամներից:

Զանազան նահանգներում մտցրած են անդամակցական վճարների պէս-պէս սիստեմներ. վճարները որոշեալ սիստեմով յատկացվում են գաւառական և նահանգական կոմիտէտներին, միայն մի մասը թողնվում է կենտրոնական կոմիտէտի կարիքների համար:

Ագիտացիօնական - դասախօսական գործի համար Եւրօպական-Ռուսաստանը բաժանված է 8 վիճակների (Պետերբուրգ, Մոսկվա, Վիլնա, Վարշաւա, Կիեվ, Օդեսսա, Խարկով և Սարատով), և իւրաքանչիւր վիճակում կայ մի յատուկ անձն, իսկ երբեմն և կոմիտէտ, դասախօսութիւններ, միտինգներ և ագիտացիա կազմակերպելու համար որոշեալ րայօնում, որը կենտրոնատեղի է հանդիսանում ինչպէս տեղական, այնպէս և եկւոր,՝ առաւելապէս մայրաքաղաքի դասախօսների համար: Բացի դրանից, կենտրոնական կոմիտէտի անդամները ուղարկվում են գաւառները կազմակերպելու յանձնարարութիւններով: Անցեալ ձմեռ բազմաթիւ միտինգներ և ժողովներ կայացան նահանգական բոլոր և գաւառական շատ քաղաքներում: Դասախօսներ պատրաստելու համար Մոսկվայում սահմանված են ագիտացիօնական պարբերաբար դասընթացքներ, որոնց ներկայ են լինում և գաւառացի անդամները: Մի քանի քաղաքներում հաստատվեցին կուսակցական կլուբներ: Կուսակցութեան մեծ կլուբը գտնվում է Պետերբուրգում, ուր դարձեալ կան 3 րայօնական կլուբներ: Մոսկվայում սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը 3 կլուբ ունի:

Կենտրոնական կոմիտէտին կից Վ. Դ. Նաբոկովի ձեռքով հրատարակվում է «Вѣстникъ Партіи» շաբաթաթերթը, որի մէջ բացի քաղաքական յօդուածներից, պարփակվում են նաև ամեն տեսակ տեղեկութիւններ կուսակցութեան կեանքի մասին՝ համայն Ռուսաստանի կուսակցական ժողովների և կոմիտէտների որոշումները և վճիռները, ընդարձակ բաժին րեպլիկաների, որոնց ենթարկվում են կուսակցութեան խմբակները և առանձին անդամները և այլն: Կուսակցական օրգան՝ բացի վերոյիշեալից, հանդիսանում են Պետերբուրգում հրատարակվող ինտելիգենցիայի համար «Рѣчь» մեծ լրագիրը և Մոսկվայում լոյս տեսնող, գիւղացիութեան համար, «Народное Дѣло» փոքրիկ լրագիրը *). Ի բաց առեալ՝ իրանց ուղղութեամբ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան յարող մայրաքաղաքային մի քանի լրագիրները, կան կ.-դ. գաւառական մի քանի տասնեակ լրագիրներ, որոնց կենտրոնական կոմիտէտի ընտրած առանձին մասնաժողովը լցնում է առաջնորդող յօդուածներով: Մ. Վ. Կոմիսարովը Մոսկվայում հիմնել է կուսակցութեան համար գրքեր հրատարակող մի ընկերութիւն «Народное Право» ֆիրմայով, որ պարբերաբար լոյս է ընծայում ժողովրդական հարիւր հազարաւոր բրօշիւրներ և թերթիկներ:

Յաճախ, ինչպէս կենտրոնական, այնպէս և տեղական կոմիտէտները իրանց կողմից հրատարակում են զանազան գրվածքներ:

Կուսակցութեան անդամները միանում են միմեանց հետ կուսակցութեան ծրագրով, որ ունի քաղաքական և տնտեսական բաժիններ, և որ հաստատված է առաջին համագումարի ձեռքով և լրացված յետագայ համագումարի ժամանակ: Կուսակցութեան տեղական բոլոր խմբակները և անդամները հպատակվում են կուսակցութեան կանոնադրութեան:

Կուսակցական կարգապահութիւնը մէկէն հաստատապէս արմատացաւ կուսակցութեան մէջ, և նրա՝ քաղաքական միակ հաւատի դօգմայով օրգանապէս միացեալ անդամները յօժարութեամբ և սիրալիր կերպով են հպատակվում նրան: Կուսակցական կարգապահութեան խախտման դէպքերը ինքնըստինքեան շատ հազուագիւտ են:

Պետական Դումայի գործունէութեան ժամանակ կենտրոնական կոմիտէտը մասնակցում էր դումայական ֆրակցիայի նիստերին: Մինչև ֆրակցիական կոմիտէտի կազմվելը նա էր տանում ֆրակցիայի գործավարութիւնը և օգնեց նրան կազմակերպվելու: Դումայի արձակմամբ ֆրակցիական կոմիտէտը ընկաւ և կենտրոնական կոմիտէտը իր վրա վերցրեց ֆրակցիայի գործերի աւարտման (ликвидація) պարտականութիւնը (ֆրակցիայում մշակած օրինագծերը, Տէրիօկում ֆրակցիայի անդամներին խորհրդակցութեան հրաւիրելու գործը և այլն):

Դումայում մշակած և «ժողովրդական ազատութեան» համեմատաբար բազմաթիւ և ժրաջան կուսակցութեան մտցրած բոլոր օրինագծերն արդէն պատրաստված են ձմեռվայ ընթացքում կենտրոնական կոմիտէտի և սրա մասնաժողովների ձեռքով. ի դէպ է ասել, որ մասնաժողովներից ամենաբազմամարդն է ագրարային մասնաժողովը, որ բաղկացած է մօտ 100 անդամներից: Կենտրոնական կոմիտէտը ունի նաև մի քանի մշակած և մշակելի օրինագծեր, և այժմ, երբ արդէն Դուման արձակված է, մտադրութիւն կայ շարունակել նրանց մշակումը, որպէսզի կուսակցական ֆրակցիայի անդամները լիակատար պատրաստ լինեն, ինչպէս առաջին Դումայում, և՝ ապագայ Դումայի համար:

(«Руск. Слово.»)

ՎԵՐԻՆ ՂԱՓԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԿՌԻՒԸ

(Նամակ Մեղրիի գիւնէյ մհալից)

—

Օգոստոսի 20-ին

Ընդհանրապէս Ղափանը և մասնաւորապէս Վերին Ղափանի հայ-թուրքական գիւղերը մարդկային արեան մի սպանդ են ներկայացնում: Հրդեհներ, աւերածութեան, ողբ ու կոծի են ենթարկվել հայը և թուրքը: Երկուստեք տարրերը մնացել են անպաշտպան, կիսաքաղցած, սրա նրա դրանը վիզները ճկած: Տարիների ընթացքում անդուլ, իրանց քրտինքի գնով վաստակած աշխատանքները, ամբողջ տնտեսութիւնը մի քանի օրվայ ընթացքում ոչնչացան, աւերվեցին և ներկայումս հայ և թուրք գիւղերը մի մի մոխրակոյտեր են ներկայացնում:

Սակայն ո՞վ առաջ բերեց այդ տարերային փոթորիկը և ո՞ւմ ձեռքով ներկվեցին և ոչնչացան իսպառ այդ գիւղերը: Սրտի դառն կսկիծով և յանուն արդարութեան ու ճշմարտութեան ստիպված ենք արձանագրել, որ առիթ տուողը, Նախայարձակ լինողը եղաւ մեր տխուր և անգիտակից թուրք մասսան, որ միշտ զոհվում է պրօվօկատոր բէկերի, խաների և հաջազօրէկ աւազակապետների ձեռքերին և այդ վերջինները հանդիսանում են իրանց գիւղացիների համար մի մի monstruun horribille և սեփական իրանց ձեռքով, իրանց ժողովրդի համար գերեզման են փորում: Մենք լաւ ենք ճանաչում թուրք և հայ գիւղացիներին, մանաւանդ Վերին Ղափանի երկու տարրերին, որոնք տարին տասներկու ամիսը աշխատում են Ղաթարի պղնձահանքերում և իրանց գոյութիւնը պաշտպանում են հանքերում աշխատելով:

Վերին Ղափանում գտնվում են հինգ հայկական գիւղեր, այն է՝ Բաջարանց, Հանդ, Բիւրդիքանդ, Փիրմազրա և Փուրխուդ, իսկ թուրքերի գիւղերը գտնվում են Մեղրիից 30—35 վերստ հեռաւորութեան վրա դէպի հիւսիս-արևմուտք և 25—30 վերստ Ղաթար պղնձահանքերից: Թուրք գիւղերը կենտրոնացած են մի տեղ և ընկած են ½—1 վերստ հեռաւորութեան վրա միմեանցից, իսկ հայերի գիւղերը կղզիացած են և միմեանցից շատ հեռու են գտնվում:

Մենք լաւ ծանօթ ենք հայերի և թուրքերի փոխադարձ յարաբերութիւններին: Հայերը գերմարդկային բուռն ճիգեր գործադրեցին իրանց հարևանների հետ հաշտ և միաբան ապրելու: Նոյնը անում էր և թուրք փոքր ի շատէ հասկացող մասը, չը նայած ամբողջ մի տարի ու կէս Օխչի պղնձահանքերը տանող ճանապարհը փակ էր հայերի համար և պարբերաբար գազանային զզուելի սպանութիւններ էին կատարում և պատահական հային որսում ու անյետ կորցնում կիսաճանապարհին՝ Գիրաթաղ թուրք հասարակութեան հողում:

Ասում ենք, որ թուրքերը հանգիստ էին, ոչ մի խլրտում և ոչ մի շշուկ, բայց մուտք գործեց Օխչի իր սեփական գիւղը Հաջի-բէգ Մելիք-Շաֆիևը, որ Շարուր-Դարալագեազի գաւառական վարչութեան քարտուղարն էր. դա, ջերմեռանդ իր պրօվօկատորական իղձերին, սկսեց ագիտացիա առաջ բերել թուրք մասսայի մէջ և ահա կամաց կամաց գլուխ բարձրացրին մի քանի աւազակներ, որոնք մինչ այդ աշխատում էին պղնձահանքերում, ինչպէս շարօղլինեցի Իսմիխանը, Շափաղլուն, Մեխտին և փիրզաւղանցի Բեբրալայ-Սարոնս: Դրանք լաւ մշակներ էին, «մաղխարչիներ», բայց Հաջի-բէգի կոչը աւելի դրանց համար նուիրական էր. հեռացան հանքերից և հայերին որսալով զբաղվեցին, մինչև որ հայը զընդակը վերջ դրեց Հաջի-բէգի կեանքին: Այնուհետև այդ հասարակութեան մէջ տիրեց խաղաղութիւն և աւելի բուռն կերպով էին ուզում երկու տարրերը համերաշխ ապրել: Թուրքերի բուռն ցանկութիւնը մինչ այնտեղ հասաւ, որ հասարակական վճիռ էին կայացրել, ստորագրել էին և ուղարկել գեներալ Գօլօշչապօվին, որ թուրք անհանգիստ Գիրաթաղ գիւղում էկզեկուցիա դնվի, որպէս զի ճանապարհի երթևեկութիւնը բաց լինի և իրանց մէջ խռովութիւնների և ընդհարումների առիթ չը լինի: Այդ բոլորը յայտնի է Զանգեզուրի ամբողջ պօլիցիային և մասնաւորապէս 5-րդ պօլիցիական մասի պրիստաւ Սախարօվին և նոյն իսկ չեն ժխտի թուրք գիւղացիները:

Մոռացանք ասել, որ Բաջարանց հայկական գիւղը, բաղկացած 70 ծխից և մօտ 700 հոգուց, գտնվում է թուրք գիւղերի կենտրոնում և երեք կողմից շրջապատված ամեհի լեռներով: Բաջարանց մտնելու համար հանքերից երթալուց պէտք է նախ Օխչի գիւղը մտնել և ապա Բաջարանց, իսկ Օրդուբաթի, Ագուլիսի կողմից գալուց պէտք է մտնել Շաբաղին և ապա Բաջարանց. ուրիշ ոչ մի ճանապարհ չը կայ: Հայերը իրանց ազգային դիմացկուն և համբերող ոգու յատկութիւններով հանդերձ խորը կերպով հաւատացին իրանց տգէտ, խեղճ, զգացմունքից զուրկ հարևանի խօսքերին, որ հաշտութիւնը անքակտելի է, ընդհարումներ տեղի չեն ունենայ: Սակայն օգոստոսի 3-ին, երբ թուրքերը այրում են «Սիւնիք» Մ.-Ազարեանցի, մօտաւորապէս կէս միլիոն արժեցող գործարանը, ահռելի եղբայրասպան հրդեհը բռնկվում է բուռն Ղափանում և օր օրի վրա հայերը ոչնչացնում ու հիմնայատակ են անում մեծ ու փոքր թուրք գիւղեր: Վերին Ղափանի թուրքերը նախօրօք սոսկալի դաւադրութիւնների ծրագիրներով զբաղված, ամսիս 9-ին ժողովվում են Հանդ գիւղը կրկին անգամ

---

*) Ինչպէս յայտնի է, մինիստրը չը թոյլատրեց:

*) Այդօրինակ փոքրիկ է և Պետերբուրգում լոյս տեսնող «Реформа» լրագիրը:

ամուր դաշն կապելու. հայերը, ի հարկէ, առանց վարանելու հաւատում են դրանց տասնեակ անգամ կրկնած և առաջարկած պայմաններին, նորից հաշտութեան համաձայնութիւն են կայացնում և ուրախ, հանգիստ ու միամիտ յոյսերով ցրւում են իրանց գիւղերը և յաջորդ օրը իւրաքանչիւրը իր գիւղական աշխատանքին է գնում։ Մինչդեռ Հանդ գիւղում հայ-թուրքական ժողով է լինում, բոլոր թուրք գիւղերից եկած՝ Շաբադին թուրք գիւղում աւազակների հրոսակախմբերի յարձակման ժողով է լինում, որտեղ լինում է և Նախիջեւանի գաւառի Թեփ գիւղից եկած աւազակապետ Սուլէյմանը՝ ահագին վոհմակով։

Լուսանում է... բայց մայլ և սև օր է բացվում քաջարանցիների համար յաջորդ օրը։ Ամսի 10-ին հայերը միամտացած նախընթաց օրվայ հաշտութիւնից, առաւօտեան կանուխ, մեծ ու փոքր, տղամարդ և կին, դուրս են գալիս իրանց արտերը հնձելու, կալը ցելու և յանկարծ տեսնում են շրջապատված հազարաւոր թշնամիներ վ և կարկտի նման թափող գնդակների տարափը իրանց ուղղած։ Ժողովուրդը սարսափահար փախչում և ապաստանում է եկեղեցու մէջ, որ վաղօրօք ամուր դիրքեր է շինած լինում՝ պաշտպանվելու համար։ Մի քանի ժամվայ ընթացքում արտերը, դիզած ցորենի խուրձերը հրդեհվում են. թալանվում են գիւղացիների բոլոր ունեցածները և հրդեհվում ամբողջ գիւղը։ Այդ օրը Փիրմազրայի և Փուրխուղի բարձունքներից նկատում են հայերը սև ամպի նման բարձրացող ծուխը և հրեղէն լոյսն, բայց հայերը փոքրամասնութիւն կազմելով անկարող են լինում օգնութեան հասնել, մանաւանդ նախօրօք թուրքերը համ դիրքերն են բռնած եղել, համ էլ Քաջարանց մտնելու և օգնութեան՝ գալու պէտք է Օխչին, Աւկէզը հիմնայատակ դարձնել, կոտորել և ապա անցնել։ Ամբողջ 4—5 օր եկեղեցու դիրքից հայերը պաշտպանվում են. ռազմամթերքի պաշարը վերջանալու վրա է լինում. կրիտիքական րոպէներ. եկեղեցու չորս կողմից քանդում են եղել՝ դինամիտով ամբողջ 700 հոգուն օդը թռցնելու. մի քանի ժամ ևս ուշանար օգնութիւնը—բոլորը անդառնալի կը կորչէին. բայց ահա հերոս Ենօքի առաջնորդութեամբ անվեհեր մարտիկները՝ եղբայրներին և քոյրերին ազատելու սուրբ տենչով, մի աննկարագրելի ուժգնութեամբ գրոհ են տալիս նախ՝ Աւկէզի վրա, թուրքերին դուրս են քշում դիրքերից, մտնելով գիւղը աւերում, հրդեհում և վերևից իջնում են դէպի Օխչի։ Վերջինները տեսնելով մերոնց սլացող գնդակների և իրանց հրդեհների ճարճատիւնը, փախուստի են տալիս և մի ժամվայ ընթացքում աւերվում է Օխչին. յանդուգն Ենօքը իր խմբով առաջ է արշաւում և թուրքերին ահարեկ դարձրած հասնում է Քաջարանց։

Մեր գրիչը դժուարանում է նկարագրել այն ուրախութիւնը, երբ տղերքը հասել էին և հազար ու մի դժուարութիւններով տեղափոխեցին Հանդ գիւղը։ Ընթերցողին ենք թողնում հասկանալու հոգեկան անզուսպ ուրախութիւնները։ Քաջարանցիներին ազատելուց յետոյ հայ գիւղացիներից կազմակերպված մարտիկները պաշտելի Ենօքի գլխաւորութեամբ յարձակվում են Շաբադին վրա, հիմնայատակ անում և հրդեհում ամբողջ գիւղը։ Այդտեղ ընկնում են աւազակներ՝ Իսմիխանը, Շափաղլուն, Մեխտին, Քերբ.-Սաբուն և շատ շատերը։ Հայերից այդ կռւում ընկնում է մէկը, այն էլ պատահաբար հայի գնդակից և վիրաւորվում է մէկը։ Հայ թռուցիկ զինւորները իրանց սրբազան ձեռքով կատարած միսիան վերջացնելուց յետոյ քաշվում են Հանդ գիւղը՝ պաշտպանելու վերջիններիս, և մի օր անցած, Օխչի, Աւկէզ, Շաբադի, գիւղերից փախած և Փիրդաւդանում ապաստանած բոլոր թուրքերը, հաւանական է աւազակ Սուլէյմանի առաջնորդութեամբ, յարձակվում են Հանդ գիւղի վրա։ Այդտեղ քաջ Ենօքի խմբին հասնում է Հ. Յ. Դ. անվեհեր և արիասիրտ Խէչօի խումբը. դրանք իրանց ամբողջ ֆիզիքական կորովի ուժգնութեամբ քշում են հազարաւոր ամբոխին և Փիրդաւդանից դուրս բերում։ Այդտեղի կռւում ընկնում են կամաւոր զինւորներից անմոռանալի Մատթէոսը, Վարդանը, և վիրաւորվում է մէկը։ Իսկ թուրքերի կորուստը անհամեմատ շատ մեծ է։ Մենք անզօր ենք նկարագրելու մի քանի օրվայ ընթացքում տեղի կռիւները. սար ու ձոր բռնել էր գնդակների ճարճատիւնը, անասունների բառաչիւնը, կանանց, երեխաների ճիչն ու ողբը. կատարեալ պատերազմական մի թատերաբեմ էր։

Եւ ահա ներկայումս տխուր և ողբալի իրականութիւնը այս է. ամբողջ Քաջարանց հայ գիւղը և Օխչի, Աւկէզ, Արալու, Օխչին, Շաբադին և Փիրդաւդանը հիմնայատակ են դարձած, ոչնչացած, գիւղացիները կիսաքաղցած, կիսամերկ. հայերը ապաստանել են Հանդ և շրջակայ հայ գիւղերում, իսկ թուրքերը անցել են Նախիջեւանի գաւառի գիւղերը և գլխաւորապէս Օրդուբաթ։ Հարկաւոր է նիւթական մէկ օգնութիւն քաջարանցիների քայքայված տնտեսութիւնը վերականգնելու։ Հարցնում ենք. ո՞ւր մնացին հայ և թուրք գիւղացիութեան փոխադարձ վստահութիւնը, դաշնակցութիւնը, հարևանութեան, եղբայրութեան և համերաշխութեան առաքինի գաղափարները։ Մինչև երբ պէտք է տիրէ թուրքերի անտագոնիզմը. միթէ ժամանակ չէ, որ թուրք պոռոտախօս ինտելիգենցիան՝ զինված ազգերի համերաշխութեան իդէալներով ներս խուժէր թուրք մասսայի մէջ և բաց անէր անգիտակից թուրք հասարակութեան առաջ կռիւների կործանարար հետևանքները. Կենդանի խօսքը, ազնիւ, անկեղծ սրտից դուրս բղխած խօսքն է կարևոր, որին կարօտ է թուրք ժողովուրդը և որը երբեք չէ տեսնում իր մէջ ազնիւ, հասարակական շահերով նախանձախնդիր երիտասարդներ, այլ խեղճ մասսան իր մէջ է ընդունում բաղդախնդիր աւազակների, իրանց որովայնի համար մառեծող պորտաբոյծ և ձրիակեր բէգերի ու աղալարների։

Հայ Յ. Դ. մարտիկներին աջողվել է երկու թուրք կանանց գերի վերցնել՝ հայ կանանց գերի տարածների փոխարէն։ Կանանց պատմելով թուրքերը այդ հրէշաւոր և կործանարար ցաւերը վաղուց են կազմած եղել. թուրք ագիտատորները ժողովրդի մէջ այն վնասակար մտքերն են պատրաստելիս եղել, որ իբր թէ թագաւոր, օրէնք չը կայ. ինչ ուզում էք կատարեցէք. հայերին պէտք է կոտորենք. շուտով Պարսկաստանի հովանու տակն ենք մտնելու և ճանաչելու ենք Նախիջեւանի խանին։ Մի խօսքով ռուս կառավարութեան պրեստիժը ոտնատակ տալով և ամբողջ տարի ու կէս հակապետական խօսքեր ներշնչելով, ամբոխի տրամադրութիւնը լարում են եղել դէպի հայերը։ Թուրք կանանց ասելով, վերին Ղափանի կռւին օգնութեան է գալիս լինում Նախիջեւանի խանի որդին, մօտ 200 ձիաւորով, բայց լսելով որ թուրքերը պարտութիւն են կրել, գլխիկոր վերադառնում է։ Խանի խմբի մէջ է եղել և Ջահրի գիւղի գալաւա Աբբասը։ Կանանց պատմելով, խանի որդին յուզումներ առաջ բերելուց ասել է, որ իրանք կանխօրէն Նախիջեւանում ռուս օֆիցէրների հետ տեսնվել են, և, վերջ ի վերջոյ հայերին պէտք է Կովկասում բնաջինջ անենք և վերականգնենք մեր նախկին կորցրած խանութիւնը։ Եւ այսպէս ընդհանրապէս ամեն տեղ և մասնաւորապէս ամբողջ Ղափանում նախայարձակ լինողն եղել է թուրք անգիտակից և մոլորված մասսան։ Համերաշխութիւնը և ինքնապաշտպանութեան սկզբունքը հայերի միակ յենարանն է եղել, և եթէ թուրքերը մեծ կորուստներ են ունեցել՝ իրանց մեղաւորութիւնն է։

Ղափանում տիրող ընդհարումներից Գենուազի թուրքերի մէջ նկատվեցին և յուզումներ. փոքրիկ գիւղերը կենտրոնացան մեծ գիւղերում։ Մտադրութիւն կար յարձակվել Շիվանիձորի վրա, բայց ինչպէս երևում է թուրքերի կրած պարտութիւնները յետ են կասեցրել, թէև երաշխաւոր չենք. քանի որ Գենուազի թուրքերի մէջ գոյութիւն ունենան տխրահռչակ Բահրամ-բէգ Մելիք-Աբբասովի (նուաղեցի) և ալիդարեցի Մաշադի-Հասան Կուլի բէգ Քալանթարովի նման դրդողներ և մոլեռանդ պրովօկատորներ, առանց օպտիմիստ լինելու կարող ենք ասել, որ ընդհարումը անխուսափելի է։ Դրանց վնասակար գործունէութիւնների վերաբերմամբ հաղորդել է գաւառապետին պաշտօնապէս IVմասի պրիստաւը։ Օրդուբաթեցիք կատարեալ բոյկօտ են հրատարակել։ Երթևեկութիւնը միանգամայն կտրված է և շարունակվում է վտանգաւոր դրութեան մէջ մնալ։ Գենուազի համար ամենակենսական և էական խնդիրներից մէկը հացի զգալի պակասութիւնն է, որ դաժան ուրուականի պէս կանգնած է ազգաբնակութեան առաջ։ Թող մեր օտարական տղերքը ինքնաբերաբար օգնութեան գան իրանց սրտից բղխած լումաներ՝ աղքատների անխախտելի դրութիւնը բարւոքելու։

Հերոսական փայլուն մահով արեան դաշտի մէջ նահատակվողներն են՝ Մատթէոսը, Վարդանը և Մկրտիչը։ Հանգիստ ձեր աճիւններին, ազնիւ, քաջարի և ձեր ազգային վեհ պարտքը կատարող զինւորներ։ Քաջարանցի տղամարդիկ և կանայք խորին ակնածութեամբ և գգուանքով կը յիշեն ձեր անմոռանալի անունները։ Դուք թէև անդառնալի կերպով սլացաք դէպի յաւիտենական գիրկը, բայց ձեր անձնուէր սխրագործութիւններով նորաբողբոջ երիտասարդութեան արեան և ուղեղի մէջ այնպիսի ուժգին և օգտակար սաղմեր պատրաստեցիք, որ անսահման բերկրութեամբ կը յիշեն ձեր անմոռանալի անունները։

Քաջարանց գիւղում կռւի ժամանակ սպանվել են 3 տղամարդ և 2 կին։

Մեղրիից պօստը թուրք ծառայողների ձեռով են ուղարկում. օրերումս կրկին ուղարկեցին, բայց երեկ թուրքը վերադարձաւ, ասելով, որ Օրդուբաթում թուրքերը խլել են մեր բոլոր նամակները։ Շատ դիւրահաւատ ժողովուրդ ենք։ Նամակս պատրաստել եմ պօստը ուղարկելու, բայց ուշանում է Օրդուբաթ չըգնացողի պատճառով։

Յ. Դանիէլեանց

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ XV ԿՈՆԳՐԷՍԸ ՄԻԼԱՆՈՒՄ

Էջմիածնի համագումարը զրկեց ինձ հնարաւորութիւնից օգտվել այն հրաւէրից, որ ես ստացայ «Խաղաղութեան և ազատութեան միջազգային դաշնակցութեան» (Ligue internationale de la Paix et de la Liberte) նախագահ պ. Էմիլ Արնոյից և իտալական խաղաղութեան ընկերութեան նախագահ հայասէր պ. Մոնետայից՝ գնալ Միլան և մասնակցել Համաշխարհային Խաղաղութեան XV կոնգրէսին, որ գումարվել է այդ քաղաքում այս ամսի 2/15-ից և պէտք է աւարտէ իր զբաղմունքները ամսիս 9/22-ին։

Գոնէ մասամբ կատարած լինելու համար պարտքս հանդէպ այդ սիրալիր հրաւէրների, ես անհրաժեշտ եմ համարում ծանօթացնել հայ հասարակութիւնը, որ այնքան ծարաւի և կարօտ է խաղաղութեան—այդ կոնգրէսի զբաղմունքների հետ։

Կոնգրէսի բացումը տեղի է ունեցել անցեալ շաբաթ օր, սեպտեմբերի 2/15-ին, առաւօտեան ժամը 9-ին Րէալ վիլլայում, ներկայութեամբ իտալական արտաքին գործերի մինիստրի։ Միլան քաղաքի վարչութիւնը, ի պատիւ կոնգրէսի անդամների, մի մեծ բանկէտ տուեց ու Մաժօր լճի վրա մի քանի զբօսանքներ կազմակերպեց։

Կոնգրէսի քննութեան ենթակայ են հետևեալ հարցերը. 1) Բեռնի խաղաղութեան միջազգային բիւրօյի զեկուցագիրը տարվայ ընթացքում տեղի ունեցած այն դէպքերի մասին, որոնք վերաբերում են պատերազմին կամ խաղաղութեան, կամ այլ խօսքերով այժմէական հարցերի մասին, որոնց թւում մի քանի տարիներից ի վեր մտցրված է և հայոց հարցը. 2) Խաղաղասիրական դաստիարակութեան հարցը. 3) Խաղաղասիրութիւնը և բանւորական շարժումը. 4) Միջազգային իրաւունքի հարցեր, որոնց մէջ գլխաւոր տեղն է բռնում Հաագայի առաջիկայ կոնֆերենցիան. 5) Պրօպագանդայի հարցեր. 6) Կոնգրէսների կանոնադրութեան վերաքննութիւն և 7) Կոչ ազգերին ու յաջորդ XVI կոնգրէսի տեղի որոշումը։

Կոնգրէսը առանձնապէս զբաղվելու է այն հարցով, թէ միջազգային ինչ խնդիրներ պէտք է մտցնել Հաագայի առաջիկայ կոնֆերենցիայի ծրագրի մէջ։ Ես համոզված եմ, որ մեր ֆրանսիացի բարեկամները, մանաւանդ անխոնջ Պիէռ Քիյարը, ամեն ջանք գործ կը դնեն, որ Հաագայի կոնֆերենցիայի օրակարգի մէջ մտցնվի և հայոց հարցը։

Մեր ջերմ համակրութիւնը և բարեմաղթութիւնները Խաղաղութեան XV համաշխարհային կոնգրէսին։ Չը նայելով միլիտարիզմի զարգացման, չը նայելով, որ խաղաղութեան գաղափարը վերջին տարիները ահագին փորձանքների ենթարկվեց, մենք համոզված ենք մեր խաղաղասէր կոլլէգների հետ, որ խաղաղութեան գաղափարը վերջնական յաղթանակը կը տանէ և կը գայ մի օր երկրագնդի վրա, ուր պատերազմի, զէնքի գաղափարը կը նկատվի իբրև բարբարոս ժամանակներից մնացած մի հնութեան յիշատակ։

Հ. Առաքելեան

ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԻ ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

II

Իշխան Սաբահէդդինի կոչին՝ մեր նախորդ յօդուածի մէջ ակնարկած հայերը Courrier Europeen»-ում պատասխանեցին, ի միջի այլոց. հետևեալը.

«...Նախ՝ պէտք է գէն գցել այն ենթադրութիւնը, թէ հայերը ցեղական թշնամութիւն են տածում դէպի իրանց հայրենակից թիւրքերը. ենթադրութիւն, որը շարունակ տարածել է, իբր փաստ, Աբդիւլ-Համիդի կառավարութիւնը գաւառների ազգաբնակութիւնների մէջ և որին հաւասարապէս հաւատ է ընծայում, կարծես, աւաղ, Եւրոպայում հաստատված ազատամիտ թիւրքերի մեծամասնութիւնը։ Հայկական պահանջները ո՛չ իրանց էութեամբ և ո՛չ իրանց ձևով չեն արդարացնում ցեղային թշնամութեան մեղադրանքը։ Նրանք կազմում են քաղաքական և հասարակական ցանկութիւնների մի ամբողջութիւն, որոնք եթէ անկողմնապահութեամբ քննվեն և արդարամտութեամբ դատվեն, պիտի տեսնենք, որ ուրիշ նպատակ չունեն, բայց եթէ նպաստել հաստատելու հասարակական մի կանոնաւոր կեանք մեր երկրում, ուր Ձեր Բարձրութիւնը պէտք է խոստովանի. կարիք կայ ստեղծելու հասարակական կեանք։

«Մենք՝ հայերին բնաջինջ անելու նպատակը, որի մասին խօսում է Ձեր Բարձրութիւնը, վերագրում ենք ո՛չ թէ թիւրք ժողովրդին, այլ Թիւրքիայի ներկայ վեհապետին։ Եւ դրա մասին կասկած անգամ ներելի չէ, քանի որ այդ վեհապետը գրեթէ ուղղակի կերպով և նոյն մտքով սպանուցել է մեր Պատրիարքներից երկուսին։ Հայերի մէջ ամեն շարժում ծնունդ է առնում նախ ժողովրդի լայն խաւերում և աճելով հետզհետէ, գրաւում հասարակութեան բարձր աստիճանները։ Մենք գիտենք սակայն, որ հայերի այս իսկապէս ռամկավարական մտածողութեան, մասայի վիճակի հակառակ, թիւրք ժողովուրդը՝ աստուածպետական, թէօկրատիկ միապետութեան տէր և տոգորված դէպի գոյութիւն ունեցող իշխանութիւնները ոչ բանական յարգանքով, գործում է յաճախ վերևից ներշնչված ուղղութեամբ։ Այժմեան թշնամութիւններն ու նրանց արիւնոտ հետևանքները արդիւնք են միմիայն այն բռնակալ կամքի, որ իշխում է այնքան դժբաղդ ժողովուրդների ճակատագրի վրա, արդիւնք են, որովհետև այդպէս է կամեցել նա։

«Ահա, ինչու, Բարձրապատիւ Տէր, մենք իրաւունք ունենք այլևս չը հաւատալու այն ենթադրութեան, որին հաւատում է սակայն Ձեր Բարձրութիւնը, թէ՝ այդ արիւնալից կոտորածները արդիւնք են մի ինքնածին պատճառի, այսինքն թէ նրանք առաջ են եկել ինքնաբերաբար։

«Թիւրքերը՝ թէկուզ վառված ամենաբուռն քինախնդրութեամբ, չը պիտի թոյլ տային իրանց գնալ ու ջարդել խաղաղասէր բուրժուաների, անմեղ տանտիկինների ու անմեղ երեխաների։ Պատմութիւնը որևէ ձևով իրաւունք չէ կարող տալ մեզ նրանց դէմ անարդարութեամբ ուղղելու մի այդպիսի ծանր մեղադրանք. Թիւրքիան անց է կացրել, բացի ներկայից, ուրիշ յուզումնալից ժամանակներ ևս։ Այդպիսի վայրագութիւններ չը գործեցին թիւրքերը հելլենական վերջին ապստամբութեան ժամանակ. և այն էլ, որ տեղի ունեցաւ, ինչ ասել կուզէ խիստ պակաս չափերով, 1875—78 թ., արդիւնք էր այն ուղղակի յուզմունքների, որ զգացել էին իրանք սուլթանի գործակալները, ընտրված արիւնարբու և վայրագ ցեղերի ներկայացուցիչներից։ Իսկ մեր վերաբերմամբ, առանց վերևից եկած գրգռումների չէին կարող այդպիսի սարսափներ կատարվել թիւրքերի սեփական նախաձեռնութեամբ։ Թիւրքերը, որոնց անբռնազբօս պարկեշտութիւնն ու լայն համբերատար ոգին ծանօթ է մեզ, չը պիտի շեղվէին մարդասիրութեան և արդարութեան այն ազնիւ աւանդութիւններից, որոնք գոյութիւն ունեն այնքան դարերից ի վեր։

«Օսմանեան հայերի ձգտումների և կոմիտէների գործունէութեան մասին ձեր արած գնահատութեան մէջ, Բարձր. տէր, կայ մի ծանրակշիռ սխալմունք, որի անհրաժեշտ է ուղղել, եթէ ցանկանում ենք պատրաստել այն ընդհանուր համերաշխութիւնը, որը, ինչպէս պնդում է Ձեր Բարձրութիւնը, կարելի է միմիայն ընդհանուր բարի կամեցողութեամբ։

«Երբ հայերը իրանց գանգատները են արտայայտում դէպի ներկայ կառավարութեան գործած հրէշութիւնները, երբ նրանք մատնանիշ են անում քաղաքակիրթ աշխարհին իրանց ճնշող ռէժիմի բարբարոսութիւնը, թիւրքերը նրանց համարում են կայսրութեան թշնամիները և ցանկանում են նրանց բնաջնջումը։

«Միթէ կարելի է բռնակալութեան դէմ մարտնչել՝ առանց յարձակվելու նրա գործակալների և տրամադրած միջոցների վրա։ Մարդ կարող է դատապարտել կոմիտէների բոլոր գործողութիւնները, բայց չէ կարելի նրանց մեղադրել, առանց անիրաւ լինելու, թէ նրանց պայքարը ուղղված է թիւրք ցեղի դէմ։ Կոմիտէները բնաւ չեն առաջնորդվում ցեղային կամ կրօնական նկատումներով, բռնապետութեան դէմ մղած իրանց կռւում։ Պաշտօնական Թիւրքիայի գործակալների դէմ կռւելիս՝ հայ կոմիտէները չէին յարձակվում միթէ իրանց կրօնակիցներից և՛ այն անձանց վրա, որոնք իրանց դաւաճանութեամբ, և կամ այլապէս, աշխատում են արգելք հանդիսանալ իրանց գործունէութեան։ Այս բոլորը՝ մի խօսքով, քաղաքային պատերազմ է, որի նպատակը չէ ամենևին անկարգութիւն առաջ բերել միայն անկարգութեան համար, և չարիք՝ չարութեան համար։

«... Բայց իրաւունք չունենք արդեօք հաստատելու նաև, որ հէնց ինքը թիւրք երիտասարդութիւնը դժուարացնում է այդ սիրալիր յարաբերութիւնների ստեղծումը, քանի որ նա առաջ չէ գալիս, ինչպէս որ պէտք է, օսմանեան քաղաքացու ազատագրութեան գործում։ Նա ոչ մի փորձ չէ անում ընդհանուր ազատութեան համար և աչքի չէ ընկնում իբր մի որևէ նախաձեռնութեամբ, վերջ տալու այն բռնակալութեան, որի հետևանքներից պէտք է իսկապէս սարսափել, հետևանքներ, որոնց այնքան պերճախօսութեամբ նկարագրում է Ձեր Բարձրութիւնը։

«Ռազմիկ և մարդասէր մի ցեղի ներկայացուցիչների կողմից մանաւանդ, չափազանցրած հեզութեան ապացոյց տալ, չէ միթէ՝ բաւականանալ սոսկ իմաստասիրական էվոլիւցիայի անխուսափելիօրէն դանդաղ ազդեցութեամբ, երկրի վարիչներին ընդունակ դարձնելու համար իրանց պարտականութեան լաւագոյն ըմբռնման։ Վստահ են արդեօք նրանք, թէ այդ էվոլիւցիան կարող է կատարել իրանց գործը։ Եւ այն դէպքերը, որ յաջորդում են գահավիժօրէն միմեանց, և այն դժբախտութիւնները, որ խուժում են մեր երկրի վրա, երևան չեն բերել արդեօք մի չափազանց խոշոր փտութիւն, որ պահանջում է ազդու գործողութիւն։

«Հասարակական Թիւրքիան, որի մասին խօսում է Ձեր Բարձրութիւնը, ինչու չը պէտք է դիմէր բացարձակ գործի։ Երկրի ներկայ կառավարութեան ոճիրները—և՛ նրանք որոնցից տառապում են հէնց թիւրքերը, և նրանք, որոնք ուղղված են դէպի միւս ցեղերը—ներկայացնելով և գործնականապէս աշխատելով նրանց արգելելու և կամ նրանց հետևանքները մեղմացնելու, հասարակական Թիւրքիան մեծապէս աջակցած կը լինէր փրկարար մերձեցման, որը բնականաբար առաջ պիտի գար գործունէութեան նոյնութիւնից։

«Որքան ուրախ կը լինէինք մենք, տեսնելով որ թիւրքերը նոյնպէս միջամտում են երկրի գործերին, ինչպէս մենք, հայերս, պաշտօնական Թիւրքիայի բարբարոսութեան դէմ հանելով Յեղափոխութիւնը։ Դա կը լինէր, գուցէ, միակ միջոցը, ապացուցելու, որ այս երկիրը կարող է ազատագրվել իր սեփական ոյժերով առանց որևէ օտար միջամտութեան։ Բայց թիւրք տարրը, որ ձեռնպահ է մնում յեղափոխական ամեն շարժման առաջ, բացի Ձեր Բարձրութեան վեհանձն յայտարարութիւնից Եւրոպայում երևան է գալիս միայն ամբաստանելու համար հայերին իբր թէ նրանք նպատակ են դրել անդամահատել օսմանեան կայսրութիւնը։ Արդարև մենք պատիւ չենք անում երբէք այդ հրատարակութիւններին՝ նկատելու նրանց որպէս Երիտասարդ-Թիւրքերի կարծիքի արտայայտութիւնը, ինչպէս որ թիւրքերը չը պէտք է մեր կոմիտէների օրգաններին վերագրէին հայ ժողովրդի կարծիքը թարգմանելու դերը։ Բայց ինչու համար մեր թիւրք հայրենակիցների միջից չը պիտի բարձրանային ուրիշ ձայներ՝ բողոքելու այդ մեղադրանքների դէմ, որոնք ծառայում են միայն Եըլդըզի բռնակալի գործի աջողութեանը։

«Միթէ միայն հայերն են, որ այնքան ջարդերի մորմոքիչ տեսարանի առաջ, կասեցնելու համար բռնակալի բազուկը և հարկադրելու համար օրինական բարենորոգումները, ցանկացել են, որ միջամտեն Թիւրքիայի բարեկամ պետութիւնները։ Միթէ բազմաթիւ թիւրք ազատամիտներ, փրկելու համար Թիւրքիան կորուստից, չեն յանձնարարել միևնոյն լուծումը։ Միթէ հէնց ինքը Միդհատ փաշան, օսմանեան լիբերալիզմի հայրը, մի բոպէ չէ ծրագրել 1293 թ. Զիլհիջէ 7-ի սահմանադրութիւնը շրջապատել դիւանագիտական երաշխաւորութիւններով, ինչ որ մի տեսակ միջամտութիւն կը լինէր պետութիւնների կողմից Թիւրքիայի ներքին գործերում։ Ճիշտ է, օտար միջամտութիւնը անհաշտ է ազգային վեհապետութեան գաղափարի հետ և նա ցանկալի չէ երբէք, եթէ հնարաւոր է նրանից խուսափել, բայց նա ոչինչ չունի տագնապալից, երբ կատարվում է որոշ նպատակով՝ յօգուտ երկրի՝ և սահմանափակ ձևով։ Նոյնիսկ Բիսմարկ, երբ հասել էր իր փառքի գագաթնակէտին, խոստովանել է, որ երբեմն նա բանակցում էր օտար պետութիւնների հետ, կարողանալ խոշոր մեծամասնութիւն ձեռք բերելու համար ռայխստագում։ Այն օրից, երբ մեր երկիրը մտել է եւրոպական կոնցերտի մէջ, ընդունվել է աշխատակցութեան սկզբունքը այն պետութիւնների համար, որոնք բարեկամ են Թիւրքիայի վերականգնման գործին։ Այդ աշխատակցութեան սկզբնական գաղափարը հայերը չեն յղացել և հայերից կախված չէ բնաւ ապագային խուսափել նրանից։

«Օտար միջամտութիւնը եղած է և պէտք է լինի անխուսափելի հետևանքն իսկ օսմանեան ազգի անշարժութեան՝ կառավարական մեքենան արդիւնացնելու, ժամանակակից պահանջներին համաձայնեցնելու գործում։

«Օտար միջամտութիւնը սպառնական պիտի դառնայ ո՛չ այնքան հայ կոմիտէների կազմակերպած ցոյցերով, որքան այն փտութեան պատճառով, որ շրջապատում է մեզ, եթէ օսմանցիների մեծամասնութիւնը շարունակէ իր անհոգ վերաբերմունքը։ Խնամակալութիւնը միջամտում է միայն այն ժամանակ, երբ գոյութիւն ունի կառավարելու անկարողութիւն կամ ակնյայտ սխալում։ Թիւրք լիբերալները հասարակական կարծիքը քաջալերած չեն լինի արդեօք, որ գոյութիւն ունի մի այդպիսի դրութիւն, անտարբեր տանելով երկրի բռնապետական կարգերը, չապստամբվելով նրանց դէմ։

«Որքան խանդավառութեամբ պիտի ողջունէր Եւրոպան, եթէ ծագէր հայ և թիւրք լիբերալների միահամուռ մի շարժում, փոխելու համար երկրի բռնակալական ռէժիմը և հաստատելու նրա տեղ մի լիբերալ կառավարութիւն՝ արժանի այն ժամանակաշրջանին, ուր ապրում ենք։ Ռուսաստանում տիրող և հպատակ ցեղերի բարեբաղդ գործակցութիւնը կարողացաւ ստիպել միապետութիւնը՝ խոնարհվելու ժամանակակից մտածողութեան պահանջների առաջ։ Ինչու համար միևնոյն բանը տեղի չը պիտի ունենար և Թիւրքիայում։

«Հայկական պահանջները, Բարձրապատիւ Տէր, ոչինչ չեն պարունակում, որ կարողանայ խանգարել օսմանեան կայսրութեան վերածնութեան գործը։ Ընդհակառակը, նրանք կազմում են լրացուցիչ մասը այն պայմանների, որոնք կարող են ապահովել մի առաջադիմական վարչութեան կանոնաւոր պաշտօնավարութիւնը։ Առանց դուրս գալու սահմաններից վարչական այն լայն ապակենտրոնացման, որի մասին խօսում է ձեր յայտարարութիւնը և որի սկզբունքը ընդունում է նոյնպէս օսմանեան սահմանադրութիւնը, հայկական պահանջները կարող էին կատարելապէս մտնել մի իսկապէս լիբերալ ծրագրի մէջ, որ նուիրագործելով հանդերձ կայսրութեան միութեան և անբաժանելիութեան սկզբունքները, կը շնորհէր քաղաքական ազատութիւններ, որոնց իրաւունք ունեն բոլոր օսմանցիները՝ և որպէս քաղաքացիներ մի քաղաքակիրթ երկրի, և որպէս ներկայացուցիչներ առանձին ցեղերի։

«Շատ թիւրքեր գնահատում են այս ծրագրի առաւելութիւնը և ընդունում են նրան ուղղամտօրէն։ Ուրեմն, հայկական պահանջերի բնութիւնից իսկ չէ որ բղխում է իրար հասկացողութեան, համերաշխութեան արգելքը։ Անհամաձայնութիւնը ստեղծված է մանաւանդ նրանց կողմից, որոնք, ընդհակառակը, պարտաւոր էին նուիրվել միութիւնը առաջ բերելու և ամրապնդելու գործին...»։

Այս գրութիւնը, որի տակ ստորագրված է «Մի խումբ օսմանեան հայեր», վերջանում է այն մտքով, թէ իշխան Սաբահէդդին ճիշտ փնտռված անձն է, և՛ իր բարձր դիրքով, և՛ իր ազատամտութեամբ, գլուխ կանգնելու հայ-թիւրքական շարժման։

Սրան պատասխանեց իր կողմից իշխան Սաբահէդդին նոյնքան խելացի կերպով, որի մասին յաջորդ անգամ։

Տ. Զ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Հրէաների համահաւասարութեան դաշնակցութեան համագումարը, ինչպէս մեզ յայտնում են, գլխաւորապէս առաջիկայ ընտրողական շրջանի համար վերջնական ուղղութիւններ (директивы) մշակելու և դաշնակցութեան՝ առ միւս կուսակցութիւններին բռնելիք վերաբերմունքը որոշելու նպատակով է գումարվում։ Համագումարին քննվելու է ապագայ Դումայի պատգամաւորների հարցը, որովհետև առաջին Դումայի համար դաշնակցութեան անցրած թեկնածուները՝ դաշնակցութեան նպատակի և խնդիրների նկատմամբ զանազան հայեացքների ներկայացուցիչներ հանդիսացան և երկար ժամանակ այդ առթիւ ոչ մի կերպ չը կարողացան համաձայնութեան գալ միմեանց հետ։ Առաւելապէս այդ երևան եկաւ Դումայում ազգային խմբակ կազմակերպելու մասին տեղի ունեցած անվերջ վէճերի ժամանակ։

Այս հարցի նկատմամբ համագումարի կարծիքը պէտք է լինի վճռական և վերջնական։

Բացի դրանից մտադրվում է համագումարում խորհել այնպիսի միջոցներ գտնելու մասին, որոնցով թերևս կարելի լինի սև հարիւրակների կազմակերպութիւնների ջարդային ագիտացիայի առաջն առնել, ագիտացիայի, որ այնքան սաստկացել է վերջին ժամանակներ։ Դաշնակցութիւնը մտադիր է զգալի չափով ընդլայնել իր գրական-հրատարակչական գործունէութիւնը, որի վրա ընդհանուր կարծիքով մինչև այժմ քիչ ուշադրութիւն էր դարձնվում, և մեծացնել գլխաւորապէս նրա ագիտացիայի բաժինը։ Սև հարիւրակների գրականութեան դէմ կռւելու նպատակով դաշնակցութիւնը մտադիր է մօտիկ ապագայում խորհրդակցութիւն կազմել Պետերբուրգի և գաւառական բաժինների միջև, որին կը հրաւիրվեն նաև Ռուսաստանում հրէաների մէջ լուսաւորութիւն տարածող ընկերութեան և այլ առաջադիմական կրթական հաստատութիւնների ու կազմակերպութիւնների ներկայացուցիչները։

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Սեպտեմբերի 4-ին

Երէկ, ամսիս 3-ին, փառաւոր հանդիսով օծվեց տեղիս նորակառոյց ս. Աստուածածին եկեղեցին և երեկոյանից սկսվեց ժամասացութիւնը այդ եկեղեցում։

Յատկապէս օծման համար եկել էին Էջմիածնից Յուսիկ եպիսկոպոսը և Սևանից՝ վանահայր և մեր համաքաղաքացի Սարգիս եպիսկոպոսը։ Օծման ժամանակ եկեղեցին ծայրէ ի ծայր լիքն էր երկսեռ բազմութեամբ։ Բացի տեղացիներից, գիւղերից ևս շտապել էին հանդիսին մասնակցելու շատ գիւղացիներ։ Ամբողջ ժամասացութեան միջոցին եկեղեցու դռների մօտ դրված էին սեղաններ, որոնց մօտ նստած մարդիկ ընդունում էին յաճախողներից նուէրներ։ Նուէրներից գոյացած գումարը եղաւ 600 րուբլի։ Շնորհիւ տեղիս երկրագործ դասակարգի, որը ձրի քար և հող էր մատակարարում եկեղեցու հիմնադրութեան օրից, և տեղացիների առատ նուիրատուութեան, մեր եկեղեցին կառուցվեց ընդամենը 4 տարվայ ընթացքում, այն ինչ այս եկեղեցին, ինչպէս խոստովանում են շատերը, առաջինը պէտք է համարել ամբողջ Երևանեան նահանգում։

Ժամասացութիւնից անմիջապէս յետոյ, հայր սրբազանները ճաշի հրաւիրվեցին քաղաքացիների կողմից, որի ժամանակ ուղարկվեց Վեհափառ Կաթողիկոսին հետևեալ հեռագիրը.

«Էջմիածին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

«Այսօր, մեր եկեղեցու օծման ուրախալի օրը, ոտնկայս համբուրում ենք Ձերդ Բարձր Սրբութեան աջը, ցանկանալով ծաղկումն և երկար կեանք հայ եկեղեցուն և նրա պետին. տայ Աստուած, որ մեր մայր եկեղեցին, ինչպէս մինչ այժմ, նոյնպէս և դարերով մնայ կանգուն և անձեռնմխելի արտաքին և ներքին թշնամիներից։ Նոր-Բայազէտցիներ»։

Ի դէպ է յիշել, որ մեր եկեղեցու կառուցմանը քիչ չը նպաստեց և մեր նախկին գործակալ Խորէն վ. Մուրադբէկեանը։ Շնորհակալութիւն հայր սուրբին իր ցոյց տուած բարոյական աջակցութեան համար։

Վան. Դովլաթեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 1-ին

«Մշակի»-ի № 188-ում տպել էք մի «իբր թէ» մանրավաճառի նամակը, որով նա կամենում է մեր ֆիրմայի անունն արատաւորել։ Սրանով մենք յայտնում ենք, որ նամակը ծանր զրպարտութիւններ է պարունակում իր մէջ. մենք ոչ-ոքի մենավաճառական իրաւունք չենք տուել, ոչ-ոքից ոչ մի կոպէկ աւելի չենք վերցրել, այլ ծախել ենք նախկին գներով։ Մենք ներկայումս խանութում ապրանք ծախելու ֆիզիքական ոչ մի հնարաւորութիւն չունենք, որովհետև չափազանց շատ մարդիկ են ժողովվում խանութի առաջն ու ներսը և, կարծէք խօսքները մէկ արած, բոլորն էլ անխտիր, թէ մանրավաճառը, թէ մեծավաճառը, թէ Թղթավաճառը, թէ «Առևտրական կուրսեր պահողը», թէ շալակավաճառը, թէ կօշկակարը և այլն և այլն, խառն պահանջում են իրանց խոշոր «պահանջներին» լի ու լի բաւարարութիւն տալ. հակառակ դէպքում սպառնալիք ու հայհոյանք են թափում մեր գլխին, սկանդալներ սարքում և միանգամայն անյարմար ու խայտառակ դրութեան մէջ ձգում մեզ և շրջապատողներին։ Եւ այդ—մի տարուց աւելի։

Ահա, այդ կացութեանը վերջ տալու համար, յանուն մեր պատուասիրութեան, յանուն մեր ջղերի, մենք սարքել տուինք մի առանձին «Թռուցիկ-սայլակ», որի միջոցով էլ մեր գործարանի ապրանքները հասցնելու ենք Թիֆլիսի բոլոր մանրավաճառներին։ Սայլակն արդէն այսօրվանից կանոնաւորապէս գործում է, պապիրօսները վաճառելով հէնց իրա (սայլակի) վրա էլ նշանակած գներով, այն է I տեսակի 1000-ը—4 ր. 30 կ. (և ոչ թէ 4 ր. 40 կ.) իսկ II տեսակի 1000-ը 2 ր. 60 կ.

Բացի այդ, արդէն մի քանի վաճառականներ իրանց պատրաստակամութիւնն են յայտնել յիշեալ ապրանքը յայտարարած գներով վաճառելու։

Թող պ. պ. մանրավաճառներն էլ իրանց կողմից աշխատեն ու աւելի գնով ոչ-ոքից ապրանք չը գնեն։

«Ն. Ի. Բօզարջեան և որդիք
առևտրական տան» կողմից՝
Յովհաննէս Բօզարջեանց

Գանձակ, սեպտեմբերի 4-ին

Կարդալով «Մշակի» № 189-ում Թիֆլիսի «հարիւրապետ խմբապետներ» Մուշեղի, Յակոբ Գասպարեանի, Շեխլիի, Սարօի, Սահակի, Դըլլօշի, Միքայէլի ու Խէչօի նամակը, մենք, ներքոյ ստորագրող դաշնակցական զինւորներս չենք կարող լուռ նայել [illegible] անուն կրող այն յանցաւոր երևոյթին, որը վերջերս ծնունդ է առել դաշնակցական զինւորների շարքերում շնորհիւ Միհրանի պէս բախտախնդիր փառատենչ անհատների ու նրանց արբանեակների։ Արդեօք ինչ բարոյական իրաւունք ունեն «հարիւրապետ խմբապետները» պաշտպանել Միհրանին ու յանդգնել գայրոյթի շանթեր արձակել այն անձնաւորութիւնների հասցէին, որոնք իրանց կեանքի գնով բարձր են պահել միշտ այն վեհ դրօշակը, որի տակ ընկել են Սերոբներ, Գէորգներ ու Կայծակներ։ Նրանց, ինքնակոչ խմբապետների, նպատակը չէ ա. գործը պաշտպանել, այլ այն անձնաւորութեան, որի սև, մութ, մայլ գոյնը երբեք չեն կարող, բնաւ ընդունակ չեն որոշել։ Եթէ մենք հաւատացած լինէինք, որ խմբապետ Միհրանը իր եսի համար չէ, որ հակառակվում է կովկասեան նախագծին ու Դաշնակցութիւնը հեղինակաւոր սօցիալիստ անուանում, որ նա, իր անձնական շահերը իսպառ մոռացած, բարձր նպատակներ ունի միմիայն աչքի առաջ, մենք ընկերական ձեռք կը մեկնէինք նրան, կը միանայինք նրա հետ. բայց նա, որին մենք լաւ, շատ լաւ ճանաչում ենք, քամու ջրաղացի նման մի բան է. քամին որ կողմից փչէ, այն կողմը կը դառնայ...

Երբ դուք, ինքնակոչ խմբապետներ, պաշտպանում էք Միհրանի պէս անձնաւորութեան, մենք յայտնում ենք ձեզ ոչ միայն զայրոյթ, այլ և զզւանք։ Միհրանը դիմակաւորված դուրս է եկել հրապարակ ու կաշուից դուրս է գալիս՝ ցոյց տալու համար միամիտներին, որ ինքն է միակ անձը, որ մտածում է արևան երկրում տանջվող ժողովրդի բիւր ցաւերի մասին... Եւ դուք հաւատում էք նրան. ո՞վ գիտէ որքան միամտութիւն ձեր կողմից, «խմբապետներ». ձեր կրծքին էք սեղմում նրան, հաւատացէք, նա այնպիսի օձ է, որ կը խայթէ ձեզ տաքանալուն պէս... «Խմբապետներ», իմացած եղէք, որ բազմաթիւ են այն ընկերները, որոնք ձեզանից պակաս չեն ցաւում ու մտածում տաճկահայ դատի մասին, բայց նրանք այժմ լուռ սպասում են գործելու ժամին, սպասում են Դաշնակցութեան առաջիկայ ընդհանուր ժողովին, ու այս դաժան օրերին նրանք չեն ուզում բնաւ ոտք դնել այն ճանապարհի վրա, որը տանում է դէպի կործանարար պառակտում...

Մի քանի խօսք էլ զինւոր Խորէնին ու խմբապետ Համօին. ամօթ, հազար ամօթ այն զինւորին, որը այս արևան օրերում կոչ է անում ու ձգտում այդպիսով պառակտում առաջ բերել Դաշնակցութեան մէջ ու վիժեցնել դրանով տաճկահայ դատը։ Դուք ասում էք՝ սօցիալիստներ չենք. արդեօք Դաշնակցութեան 1892 թ. ընդհանուր ժողովի կազմած ծրագիրը կարդացե՞լ էք. խորհուրդ կը տայինք մի լաւ կարդալ ու [illegible] ձեր հայդուկին անվայել կոչն անէիք։ Մենք զինւորներ ենք, մենք ճնշված, հալածված ժողովրդի պաշտպաններ ենք, ուր էլ լինի նա՝ Տաճկաստանում թէ Կովկասում։ Ամօթ է ազատութեան մարտիկին, երբ նա վհատվում ու գրում է, թէ մենք կօզակի դէմ չենք կարող կռւել...

Միհրանին յիշեցրէք, որ նրա շինած ճանապարհով ոչ ոք մեզանից անցնելու չէ ու նրա «փրկարար» ձայնը ոչ ոք լսելու չէ...

Մենք շատ ցաւում ենք, որ արդի աննպաստ պայմանները հնարաւորութիւն չեն տալիս մեզ թւել Միհրանի կործանարար քայլերը անցեալում, թւել լրագրի էջերում նրա գործած աններելի սխալները, որոնցից շատերը գործված են գիտակցաբար. մենք այդ կանենք ընկերական ընդհանուր ժողովում, որը կը պոկէ անշուշտ Միհրանների դիմակները ու ցոյց կը տայ հայ ժողովրդին նրանց իսկական պատկերը։

Մենք յայտարարում ենք, որ «Մշակի» 189 համարում տպաւորած յօդուածի տակ ստորագրողները ինքնակոչ խմբապետներ են, նրանցից մի քանիսը անարժան են դաշնակցական զինւորի վեհ կոչման։ Մենք առ այժմ մատնացոյց ենք անում միմիայն մէկի վրա Շեխլիի, որի մութ խաչագողական բարոյականը քաջ յայտնի է Պարսկաստանում, Զանգեզուրում ու Հիւսիսային Կովկասում...

Դաշնակցական զինւորներ՝
Բաբերդցի Սեւօն-Էֆէ
Բաբերդցի Առաքել
Գանձակեցի Յարութիւն
Պարսկաստանցի Սողոմոն
» Պետօ
» Առաքել
» Յովսէփ
Գանձակեցի Միխակ
Հաջի Լեւոն, Ախալցխացի

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

(Նամակ խմբագրութեան)

Պ. պ. զանգակականները իրանց թերթի 15-րդ համարում պրովօկացիայի մի մեծ հանճար էին փայլեցրել, ահա թէ ինչպէս. շահագործելով իմ զինակիր ընկերների ազդեցութիւնը դուրս են եկել ինձ անպատւելու։ Այո, պ. զանգակականներ, բախտախնդրութեան համար դեռ իմ քսան տարեկան հասակից մինչև Երևանի վերջին բանտարկութիւնս զանազան ժամանակներում հինգ անգամ բանտ եմ նստել, իսկ ստորութիւն, յետին մտքեր, դաւաճանութիւն և այլն ձեր սրիկաների մշտական զարդը կազմող այդ գոհարների համար էլ հինգ անգամ կռուի դաշտն եմ գտնվել. մի անգամ ամաչեցէք. աւելին ի՞նչ կարող եմ ասել, հասարակութեան մէջ դուք դուրս էք եկել ձեր անհատական նեղ աշխարհն էք շօշափում, ուրիշ ոչինչ. ողորմելիներ, նիւթ տուէք, որ ժողովուրդը ձեզ հասկանայ թէ ինչ է ձեր ցաւն ու ջուրը: «Մշակում» տպված իմ նամակներին այդ ճանապարհով կռուելը մօտաւորապէս անբարեխղճութիւն է. վիճաբանութեան մէջ նեղը ընկած Թուրքերի ճիշտ և ճիշտ օրինակին էք հետևում. «Հիւմէթի Մուհամէթ չը կայ», բացականչում են «գեավուր տիրիմէ սէօյտիր»: Ուղիղ այդպէս, այդ հոգով դուք պրովոկացիա էք անում իմ և զինակից ընկերների մէջ, կեղծ խաբարներ էք հասցնում և գրգռում ընկերները ինձ դէմ. իբր թէ Երևանում, Էջմիածնում իմ կազմած ժողովների մէջ շահագործել եմ ընկերների անունը, յետոյ, և յետոյ այդպէս՝ զինուորը զինուորի դէմ դուրս էք բերում մէկը միւսի պատիւը արատաւորելու: Ի՞նչու. որպէս զի մէջտեղը դուք բաւականութիւն ստանաք. լաւ դեր է և շատ լաւ. յանուն արդարութեան և յանուն մարդկային պատուի ես կը պարտաւորեցնէի Երևանում իմ կազմած ժողովին, որ նրանք վկայէին, այնտեղ այն ժողովին որև է ընկերի անունը շահագործե՞լ եմ երբևիցէ մի ձևով: Երբ ձեր կէս գիւժին ճառախօսները մէկը միւսի ետևից ուզում էին ապացուցանել որ՝ ոչ մի շրջանում չը կայ և գոյութիւն չունի յուզմունքներ, որ ամեն տեղ խաղաղ է, միակ խռովութիւնը ես եմ, որ ներկայանում եմ, նոյնիսկ ճառախօս պարոններից մէկը յայտնեց, որ ինքը Թիֆլիսից է գալիս և որ այնտեղ ոչինչ չը կայ՝ «Արծարծվող ծրագիրը Միհրանի և մի քանիսի սարքած բաներն են», միայն այդ դէպքում առիթ ունեցայ շօշափելու Սեպուհի անունը հետևեալ կերպով. ասացի, որ բաթումցիները արդէն ոտքի են կանգնել, որ այդ առիթով Սեպուհին ուղարկել են այնտեղ, բայց անօգուտ է և ըստ երևոյթին նա էլ է թաթախվել, որովհետև դառախօսներին ձերբակալել և Թիֆլիսի բիւրոյին փէշքեշ են ուղարկել և այլն. ընկերի և ոչ ընկերների անուն շօշափող ահա միակ փաստը:

Երևանում և ամեն տեղ ժողովրդին իմ առաջարկն է եղել, որ ժողովուրդը կազմակերպվի ու այդ ձևով ինքը ժողովուրդը վերականգնէ ընկած գործը իր հիմնական նպատակի հիման վրայ. Թող ընտրէ իր ժամանակաւոր վարչութիւնը և ժամանակաւոր կոմիտէն մինչև ընդհանուր ժողովը, մենք պատրաստ կանգնենք և ժողովի համար մեր ընտրովի պատգամաւորը: Այսպէս, այս ինքնակամ առաջնորդացութիւնը, պարզ է որ, իր պարապ հողը ունի, որի առաջ անպայման տեղի են տալու զաքասռովկաներով առաջնորդվող սօցիալիստ կոմիտէները. Թող ինքը ժողովուրդը վկայէ այս բոլորը, և վկայէ այն, թէ ինչ անախորժ դրութեան մէջ էին այդ կէս գիւժին ճառախօսները, ամեն կողմից ժողովը բողոքում էր դրանց դէմ: Իսկ ինչ վերաբերում է այնտեղ իմ սարքած դիկտատուրային, դրա համար «սօցիալիստ» իշխանութիւնը արդէն լուրջ միջոցներ է ձեռք առել. Աստուած վերջը բարին կատարէ, տեսնենք վերջը ո՞ւր է յանգելու: Արդէն այստեղ է հաւաքվել մեր գեներալիտէտի շտաբը, որի անունով Թռուցիկներ է որ դէս ու դէն տարածվում են, որպէս զի այդ գեներալների հպատակ զինուորները զգուշանան և չը մասնակցեն մեզ, հակառակ դէպքում զինուորները պատասխանատու կը ճանաչվեն: Կամաւոր զինուորների հասցէին այդ համարձա՛կ հրամանը, բարեբախտաբար ասենք թէ դժբախտաբար, սաստվելու փոխանակ ըմբոստանում են, ինչպէս այդ նկատվեց Իգդիրից այստեղ եկած զինուորներից. պատմում էին, որ իրանց նախկին ձևով առաջարկել են ութական րուբլի ճանապարհածախս, բայց երբ զինուորները ընդդիմացել են, քսանական րուբլի նպաստ են ստանում. և ինչո՞ւ չը պիտի ստանան, երբ նոյն զինուորները իրանց լաւծի համաձայն ինձ պատմում էին, որ ամեն չարչարանք, ամեն տանջանք մենք քաշենք, մինչդեռ այնտեղ Կարսում զաքասռովշչիկ չալաչուլանները մեր կազմակերպութեան հաշւին ոչխարի մսով փլաւ են վայելում, էն էլ որտեղ Կարսի բուլվարում, բացօթեայ: Պ. պ. զանգականներ, ահա թէ որտեղ է հասել ձեր նոր դաւանանքի մոլեռանդութիւնը: Եթէ այդ ճիշտ է, «ձեր նոր ուխտը մուպարէք». միւս անգամ առիթը ներկայացնելիս՝ աշխատեցէք որքան կարելի է շնորհքով պատսպարվել տաճկահայ դատի անուան տակ, և դուք աշխատեցէք որքան կարելի է համոզել ժողովրդին, մանաւանդ մեր խեղճ զինուորներին, որ ձեր սրտի ամենամօտ հարցը Տաճկահայաստանն է. այդպէս ձեր փաղաքշական այդ անկեղծ խօսքերով դուք աշխատեցէք պատասխանել այս ու այն յուզմունքներին, որ, Դաշնակցութիւնը իր նախկին ուղղութեան մէջ է: Հարցնում ենք. ո՞րտեղ է Դաշնակցութեան հիմնական նպատակը. Կարսի սադում, թէ ձեր այստեղի շտաբում, որ անգործ զինուորները գալիս ձեզանից գործ են խնդրում: Երբ միամտաբար իրանց անձնաւորութիւնը ձեզ ծանօթացնելու համար ասում են, որ մենք այս ինչ հարիւրեակի զինուորներն ենք, անմիջապէս ձեր շնորհալի պատասխանը այն է լինում, թէ ինչ հարիւրեակ, ինչ բան, հէր օրհնածներ, ասացէք այս ինչ պրոֆէսիոնալ ընկերութեան անդամներիցն ենք, որ ձեզ հասկանանք ու գործ տանք: Դրա համար ասում է առածը, որ գինուց դարձած քացախը թունդ կը լինի. պ. զանգականներ, դրա համար դուք ընկերներին լարում էք իմ դէմ, որ նրանք ձեր բերանով դուրս գան ինձ դաւադիր, բախտախնդիր և սոոր ածականներով շաղախեն. այդ բոլորը անշուշտ կը լինի արժանի հատուցում իմ տարիների աշխատանքին. այդ դեռ բաւական չէ, «Զանգի» էջերից էլ բարձր գոռում էք՝ հեռի դաւադիր Միհրաններից: «Մշակի» մէջ իմ նախորդ նամակները ձեզ պարզ էին և հասկանալի. բայց կծկվել էիք, այդպէս համարձակ պատասխաններ չունեցաք. ինչո՞ւ. ինձ թւում է այս բոլորը յանձնել իմ զինուոր ընկերների և ձեզ համար ոչխար ճանաչված հայ ժողովրդի խղճին. Թող դատեն նրանք:

Խմբ. Միհրան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Օգոստոսի 30-ին

Կենտրոնական ժողովում պատգամաւորների մեծամասնութեան բռնած դիրքը և նրա կուսակցական նեղ ուղղութիւնը՝ ժողովրդին իր ժողովրդական հաստատութիւններից—եկեղեցուց ազատելու առիթով, բաւական մեծ յուզում առաջ բերեց այստեղ, վիճակցող շրջաններում:

Երէկվանից իր գայրոյթը արտայայտող հետևեալ բողոքագիրն էր ստորագրվում պ. Հ. Առաքելեանին ուղարկվելու համար.

«Մեծապատիւ պ. Համբարձում Առաքելեան:

«Բողոքել ենք և կրկին բողոքում ենք: Դիմում և խնդրում ենք ձեզ յայտնել և ներկայացնել այս՝ Վեհափառին և ժողովի պ. Նախագահին: Բագւում ոչ կանոնաւոր ընտրութիւններ են եղել և ոչ ծխականների կողմից ընտրված պատգամաւորներ ունենք, որ Կենտրոնական Ժողովում կարողանային արտայայտել մեր կամքը:

«Հետևապէս մենք ոչ թէ համամիտ չենք ինքնակոչ պատգամաւորների արտայայտած խակ և վտանգաւոր ցանկութիւններին ու որոշումներին, այլ և վրդովված ենք, որ մեր դարևոր ժողովրդական եկեղեցին բաժանում են անբաժան ժողովրդից, ուրիշ խօսքով, մեզ մեզնից: Որովհետև եկեղեցին մեր համախմբումն է, որովհետև այդ ամբողջ հայ ժողովուրդը ներկայացնող մի ազատ դաշն և ինքնավար դաշնակցութիւն է կազմում այդ դարևոր եկեղեցին, ուստի և ոչ մի Ցազկերտ, ոչ մի բռնի ույժ ու նոր դաշնակցութիւն իրաւունք չունի նրան իր կուսակցական-բիւրօկրատական նեղ շահերին ծառայեցնելու, եթէ չէ ուզում յափշտակիչ-բռնակալների անունը վաստակել»:

Իսկապէս ոչ ոք ոչինչ չէր ունենայ, եթէ հայ եկեղեցուց հեռացնէին նրա ոգու հակառակ նորամուտ կղերական կեղտն ու ձրգտումը, նրա ազատութիւնը խանգարող, ստրկացնող ամեն մի բռնութիւն, կամ ձգտէին եկեղեցում աշխարհական տարրի գերազանցութեան... Բայց ինչ կը նշանակէ ժողովրդին բաժանել եկեղեցուց:

Պատմական մեր կեանքում, բռնութեան օրերում, մեր մէջ գոյութիւն է ունեցել երկու տեսակի ընտրութիւն:

Առաջինը՝ բռնի ույժի կամ միմիայն բռնակալական կամքի ցեղական ընտրութիւն, որով փոքրիկ բռնակալը ժառանգական իրաւունքով յաջորդել է մեծին և պարգևել է մեզ դարերով թշուառութիւն...

Երկրորդը՝ ժողովրդական ձայնի իդէալական գնահատութիւն և այդ հաւասար իրաւունքի, արդար ընտրութեան պարզաւորողը եղել է առաքելական մեր եկեղեցին, որի ընտրած ընդհանուրի հայր՝ հայրապետ—պետը զինքնարը, եթէ խորթ հոր նախնիներ է ցոյց տալու, իսկոյն նրա ընտրող որդիքը միշտ իրաւունք են ունեցել նրան հեռացնելու:

Այս երկրորդին ընդդէմ գնալը, որդիք չէ՞ նշանակում առաջին գիրկն ընկնել:

Յ. Խ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

—

«Մշակի» մէջ մեր լոյս հանած փաստերը տեղիս որոշ տեսակի գործիչների մասին չը հերքվեցին, այլ միայն հայհոյանքների ենթարկվեցին նրանք «Զանգում»: Փաստերի դէմ հայհոյանքը՝ բարոյական սնանկութեան փայլուն ապացոյցներն են:

«Մխիթար» և «Հայք» ուղարկվեցին այստեղից բողոքելու Դաշնակցութեան նոր ուղղութեան դէմ: Բայց նրանք գնացին՝ Թիֆլիսում միացան «Սեպուհի» հետ: Այստեղ վրդովված են, կազմակերպվում են, խոստանում են իրանց շարքերը իրանց դժոխք հայրենիքի հաւատարիմ դաւաճանը: Տաշօ Եղիշէ Թոփչեանի խրատները այլ ևս չեն ներգործի և ոչ էլ Խիզախ խմբապետ Միհրանի դէմ անուանարկիչ փորձերը: Լուրջ և խիստ ինքնաքննադատութիւն. ահա միջոցը, և, որքան կարելի է շուտ՝ Դաշնակցութեան ընդհանուր ժողով: Դաշնակցութեան շղարով ծածկվելը, դաշնակցական տաղերով բողոք պատռելը, դաշնակցական հերոսների անունով երդվելը և նոյն իսկ կոմիտէի անդամ լինելը չեն կարող մէկին դաշնակցական դարձնել, երբ նա հոգով յեղափոխական չէ, երբ նա գլխով դատարկ է, սրտով Դոն-Ժուան, ձգտումներով բուրժուա, էութեամբ՝ «ուտելու համար ապրող»:

Օրը ցերեկով բռնութիւններ են կատարվում,—հրապարակ են հանում, ո՛ «պրովոկացիա» է այդ, մատնութիւն է այդ, սուտ է այդ բացականչում են խօսքով դաշնակցական յեղափոխականները:

Մի խումբ մարդիկ զայրացած «կենտրոնական ժողովի» դաշնակցական պատգամաւորների դօնքիշոտութիւնների դէմ, հեռագիր են խմբագրում և անմիջապէս 30—40 ստորագրութիւններով ծածկում ու տալիս են որ մօտ ածեն քաղաքի մէջ. Դաշնակցութեան սուրհանդակը հետ պէս ցցվում է հեռագիր ման ածողի տանը և կ.-կոմիտէի անունով քարշ է տալիս նրան սրճարան: Տանում են սրճարանի առանձնարանը և բռնութեամբ հանում գրպանից հեռագիրը: Ստորագրողները բողոքում են. միւս օրը միայն հետ են տալիս հեռագիրը ասելով, որ զինուորներն են արել այդ առանց կոմիտէի գիտութեան. Երկուսից մէկը—եթէ զինուորները առանց են գործելու իրանց ուզածը, կը նշանակէ կազմակերպութիւնը սնանկ է դարձել, չէ կարողանում զսպել իր զինուորներին. իսկ եթէ կոմիտէի անդամները թելադրում են իրանց սուրհանդակներին ու զինուորներին և այժմ իրանց արդարացնում—այդ առաւել վատ, կը նշանակէ վարիչները խաբեբաներ, սրիկաներ են, այլ ոչ յեղափոխական մաքուր գործիչներ:

Հերքեցէք, փոխանակ հայհոյելու:

Տեղական ծխական դպրոցները կրիտիկական դրութեան մէջ են: Հոգաբարձութիւնը ժողով է գումարում և ներկայացնում է երեք տեսակ վիճակ—ծխական տուրքը դանդաղ է հաւաքվում. հիմքը կամաւոր է, ժամանակը անյորդ, չեն շտապում վճարողները: Բանուորները չեն կարողանում կազմակերպվել, գործարանները չեն մտած նորմալ ընթացքի մէջ, քաղաքը անտեսական ծանր տագնապի է ենթարկված: Ի՞նչ ասել, Անշնորհք են եղել հին հոգաբարձուները. պէտք է ընտրել նոր հոգաբարձութիւն: Ծխական ժողովներ են հրաւիրվում: Չեն գալի. եկած ժամանակ էլ իրանց դէմ հակառակ խօսողին վայրենի կերպով լռեցնում են, ինչպէս լռեցրին ամսիս 29-ի ժողովում, որից առաջացաւ մի խայտառակ իրարանցում: Մի քայլ մնաց, որ եկեղեցու մէջ տրաքէին ատրճանակները: Ցրվեցին կանայք, տղամարդիկ... ժողովների մէջ հրամանատարներ են մարդիկ, որոնց վրայ ոչ եկեղեցին է ազդում, ոչ կանանց ներկայութիւնը. ոչ խօսքի ազատութիւնը գին ունի և ոչ դիմացի մարդու կարծիքը և ոչ էլ նոյնիսկ նպատակը, որի համար հաւաքվում են: Եւ այս տիպի վայրենիները իրանց յեղափոխական գործիչներ են համարում:

Հերքեցէք, փոխանակ հայհոյելու:

Բաթումցի

ԽԵԼՔԻ ԱՂՔԱՏՆԵՐԸ

—

Երջանիկ են, հազար անգամ աւելի երջանիկ ու ազնիւ են իմ աչքում հարստութիւնից ու ոսկուց զուրկ աղքատները. բախտաւոր են հացի մուրացիկները. բայց որքան խղճալի են ու թշուառ, հոգու, մտքի սնանկները, համոզմունքից, բնաւորութիւնից զուրկ խելքի աղքատները: Ո՞ր ազգի մէջ կարող էք աւելի գտնել այդ կարգի մարդկանց երամակային բազմութիւն, եթէ ոչ մեր տարաբախտ հայ ազգի մէջ: Այո, շատ ու շատ են մեզանում այդ տեսակի մարդիկ, նրանք ինչպէս ոչխարների հօտի մի մեծ զանգուած քշվում են հօսանքի առաջ, դէպի ո՞ւր, իրանք էլ չը գիտեն: Միթէ ոչխարները գիտեն, թէ իրանց ուր են տանում «գոչերն ու այծերը»:

Եւ ահա թեքվողները, միմիայն իրանց անձի, դիրքի, կարիերայի մասին մտածողները, աշխատեցին օր առաջ ձգել իրանց այդ հօսանքի մէջ: Եւ ինչ. անշնորհքներ, ապիկարներ գլուխ բարձրացրին, խղճուկ օրացոյցներ հրատարակողները ազգային առաջաւոր գործիչներ դարձան, չարչիները, աշակերտները հոգաբարձու և պատգամաւոր: Իսկ արժանաւոր, փորձված ու հայ կեանքին քաջ ծանօթ մարդիկ, որ չուզեցին մտնել այդ վհմակի մէջ, մնացին գործերից դուրս:

Այդպիսի ժամանակ շատ որոշ երևում են թեքվողները, միշտ «կշեռքի ծանր կողմն» անցողները:

Եպիսկոպոս եմ ճանաչում, որ քննէ առաջնորդ, «հովիւ» լինելով հանդերձ ինքն իրան ձգեց այդ «հօտի» մէջ, սկսեց հանգանակել, յօդուածներ թափել այդ պղտոր «ալիք»-ների մէջ, օրերով գնաց նրանց փարախը «վերընկնելու», թէ ահա տղայք ես ձեր մարդն եմ. կարճ ժամանակ առաջ այդ եպիսկոպոսը «կապը կտրած լակոտներ» էր անուանում նրանց: Ուսուցիչ եմ ճանաչում, որ երբ տեսաւ ոչխարային հօտի «յաղթանակը», ինքն հակառակ համոզմունքի տէր լինելով հանդերձ, գնաց ստորագրեց նրա «մեծամեծների», զօչերի առաջ, թէ ես ձեր մարդն եմ, թերթակցութիւն է եղել իմ այլ թերթում աշխատակցելը:

Բանաստեղծ եմ ճանաչում, որ իր գրուածքների մէջ շատ վերևից է գալիս, համամարդկային գաղափարներից, տիեզերից ու մարդկանց եղբայրութիւնից խօսում, բայց երբ «կազմակերպութիւնը նրան առէին կապեց» դարձաւ թունդ կուսակցական, թունդ պրօպագանդիստ:

Օ՜, որքան դժուար բան է եղել գլուխ պահելը: Մի տեսակ մարդիկ էլ եղան, որ «խոհեմութիւն» համարեցին բոլորովին լուռ մնալ, խեղդել իրանց ներքին ձայնը, ներքոյ գլուխը քաշել մինչև որ կանգնէր այս ամբոխն ու իրարանցումը:

Ահա մեր «բռո» իրականութիւնը: Մուրացիկներ, խելքի աղքատներ, դուք ողորմելի էք:

Լիւցիֆեր

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Գուդաուտա, 28 օգոստոսի

Գուդաուտայում մէկ տարի է հայերէն ներկայացում չէր տրվել՝ սիրողներից անկախ պատճառով: Վերջապէս այս անգամ մի խումբ աշխոյժ սիրողներին գլուխ բերել Թատրոնի գործը:

Կիրակի, օգոստոսի 27-ին, Անուխվա գիւղի (Սուխումի շր.) նորաբացվելիք օրիորդաց ուսումնարանի օգտին ներկայացրին Շիրվանզադէի «Պատուի համար» և «Կռիվ-կռիվ» վօդևիլը: Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր հանդիսականներով, որոնց կէսը կազմում էին օտարազգիները՝ ռուսներ, վրացի, աբխազ և Թուրք երիտասարդներ:

Ներկայացումը անցաւ աշխոյժ: Հանդիսականները ցրվեցին Թատրոնից շատ գոհ:

Փ. Մինասեանց

—

Երևան, 4 սեպտեմբերի

Ամսիս 3-ին Ամառային գիւղում մի խումբ գործակատարներ ներկայացրին Շիրվանզադէի «Պատուի համար» և Փափազեանի «Զարպիկ փաստաբանը» առաջին անգամ, և առանց պատրաստվելու նրանք բեմ բարձրացան: «Պատուի համար» դրաման դուրս բերեցին կատակերգութիւն, իսկ վօդևիլը դուրս եկաւ ողբերգութիւն: Յոյս ունենք, որ սիրողները երկրորդ անգամ չը համարձակվեն բեմ բարձրանալ և հեղինակների անունները խայտառակել:

Մուսօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետևեալ համարը Աստուածածնի տօնի պատճառով լոյս կը տեսնի կիրակի, սեպտեմբերի 10-ին:

—

Չորեքշաբթի, ամսիս 6-ին, երեկոյեան ժամի 8-ին գին.-նահանգապետի կարգադրութեամբ ոստիկանութիւնը տպարանական վերահսկիչ հետ միասին Մ. Վարդանեանի տպարանը, յայտարարեց, որ «Զանգ» լրագրի հրատարակութիւնը դադարած է և այդ պատճառով փակվում և կնքի տակ է առնվում նաև տպարանը: «Զանգի» խմբագիր-տնօրէն տիկին Եղիսա Մելիք-Քալանթարեանին յայտնված է երեք օրվայ ընթացքում հեռանալ գեներալ-նահանգապետութեան սահմաններից: Աւելացնենք, որ այս շաբաթ լոյս չէ կարող տեսնել և «Մթարաք» զաւեշտաթերթը, որովհետև նա ևս տպվում էր նոյն տպարանում:

—

Երէկ հաղորդել էինք, որ դատաստանական պալատը՝ քննելով «Կռունկ» և «Կայծ» լրագիրների խմբագիրների գործը, դատապարտել էր պ.պ. Բ. Իշխանեանին և Ա. Երզնկեանին երեք տարվայ բանտարկութեան: Այժմ հաստատ աղբիւրից լսում ենք, որ դա սխալ է. երկու թերթերի խմբագիրների բացակայութեան պատճառով դատը յետաձգված է:

—

Չորեքշաբթի, սեպտեմբերի 6-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում քննվեց «Встань Спящій» լրագրի խմբագիր Իոն Բրիխնիչևի գործը, որը մեղադրվում էր 128 և 103-րդ յօդուածների հիման վրայ: Պալատը երկար խորհրդակցելուց յետոյ որոշեց. «Մեղադրվող Իոն Բրիխնիչևին մեղաւոր ճանաչել քրէական պատժագրքի 103-րդ յօդուածով և բանտարկել նրան 1 տարով. «Встань Спящій» շաբաթաթերթի հրատարակութիւնը դադարեցնել ընդմիշտ: Դատարանային բոլոր ծախսերը պահանջել մեղադրվողից, իսկ 128-րդ յօդուածով քաղաքական յանցանքների մէջ մեղադրվելու նկատմամբ արդար ճանաչել»:

—

Սեպտեմբերի 5-ի գիշերվայ ժամը 12-ին Արմեանսկի բազարի և Երևանեան հրապարակի անկիւնով անցնող մի կառքից լսվում է կանացի օգնութիւն կանչող աղաղակ. փողոցի անկիւնում կանգնած մի քանի ոստիկաններ ընկնում են կառքի ետևից և կառքը կանգնեցնում: Կառքում նստած են լինում երկու դռնապաններ և մի 15 տարեկան օրիորդ՝ Կազիևա ազգանունով: Վրայ հասնող մի պահակ զինւոր և ոստիկանները դռնապաններին և օրիորդին նոյն կառքով տանում են 5-րդ քաղաքամասի ոստիկանատուն: Հարց ու փորձ անելուց պարզվում է, որ Կազիևան իր մօր և 12 տարեկան քրոջ հետ բնակվում են Օբշչեստվէննի փողոցի վրայ: Այդ երեկոյ նրանք հիւր են գնացած եղել: Տուն վերադառնալուց յետոյ՝ փողոց է դուրս եկել մեծ աղջիկը: Հէնց որ փողոց է ոտք դրել, անյայտ մարդիկ բռնում են նրան և նստեցնում այնտեղ սպասող կառքի մէջ: Նրանցից մէկը թաշկինակով կապել է աղջկայ բերանը, իսկ միւսը ծածկում է պարկով: Յիշեալ երեքը ոստիկանները գտել են փողոցում: Այժմ գողացողները բանտարկված են, իսկ օր. Կազիևային ուղարկել են տուն: Ըստ երևոյթին այդ դէպքը վիպային առաւ ունի: Օրիորդին փախցնողներից մէկը հայ է և այն տան դռնապանն է, ուր ապրում են Կազիևները: Նա երկար ժամանակ հետաքրքրվելիս է եղել այդ օրիորդով և ըստ երևոյթին սիրահարվել է: Պայմանաւորվելով իր ընկերոջ հետ, նա վճռել էր փախցնել նրան, բայց չյաջողվեց:

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը միջնորդութիւն է յարուցել ազատել իրան բժշկական ծառայութեան կառավարչական անձերին պահպանելու ծախսերից, որովհետև քաղաքը ունի իր սանիտարական բժշկական կազմակերպութիւնը, որը կարող է վարել կառավարչական քաղաքային բժիշկների պաշտօնը:

—

Իվ. Մչեդլիշվիլիին Թոյլատրված է հրատարակել Թիֆլիսում վրացերէն հասարակական-քաղաքական և գրական լրագիր «Իսարի» (Սլաք) անունով:

—

Մոսկվայի լրագիր «Новый Путь»-ը հաղորդում է. «Երէկ լուր տարածվեց, որ Պետական Դումայի նախկին անդամ Ռամիշվիլին բանտարկված է և կասկածվում է իբրև Վիբորգի կոչը և բանւոր դասակարգին վերաբերեալ Թռուցիկներ տպելու և տարածելու մասնակցող: Այդ հաղորդած լուրը անհիման սուտ է, որովհետև Ռամիշվիլին ապահով ապրում է Կովկասում:

—

Ասովեանի կոնֆէկտի գործարանում ծառայող Ալագ Մանուկեանը մտնելով մեր խմբագրատուն յայտնեց, որ իր կին Հռիփսիմէ Յարութիւնեանը երեքշաբթի, սեպտեմբերի 5-ին, դուրս գալով տնից գնում է լուացք անելու, բայց երեկոյեան չէ վերադառնում, և այժմ էլ յայտնի չէ նրա որտեղ լինելը: Նա 25 տարեկան է, ամուսնացած հինգ տարի առաջ: Խնդրում են, եթէ կը գտնվեն այնպիսի մարդիկ, որոնք գիտեն յիշեալ կնոջ տեղը, թող յայտնեն Ասովեանի գործարանում ծառայող Ալագ Մանուկեանին:

—

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցում առաջին բաժանմունքին կից բացվում է 3-րդ զուգընթաց բաժանմունք 30 հոգու համար, ուստի և պարապմունքները յիշեալ դպրոցում յետաձգված են անորոշ ժամանակով:

—

«Իրշադը» հաղորդում է հետևեալը. «Պարիզում հրատարակվող «Rappel» լրագրի սեփական Թղթակիցը Տօկիոյում, ուղարկել է մի այսպիսի հեռագիր. «Մօտ ժամանակներումս գումարվելիք կրօնական ժողովի ներկայացուցիչների արած հաստատ յայտարարութիւնների համաձայն, ժողովը Եապօնիայում մահմեդականութիւնը ընդունելու և որպէս պաշտօնական կրօն և մահմեդական կրօնը միւս կրօնների շարքում մեծամասնութիւն է շահելու: Մահմեդականութեան Եապօնիայում տարածվելը և ընդունվելը շատ ցանկանում է ոչ միայն Եապօնիոյ կայսրը, Միկադօն, այլ և ժողովի [illegible]»:

—

Բոտանիքական այգու կառավարիչ է նշանակված գիտութեան ճեմարանի քարտուղար՝ Իւ. Ն. Վորոնովը:

—

Անցեալ շաբաթվայ ընթացքում, Բաքւում, նաւատորմի պահեստից գողացված զէնքերի համար կառավարութիւնը բանտարկել էր 11 նաւաստիների և զինուորական դրութեան օրէնքի համաձայն պատասխանատւութեան էր ենթարկելու նրանց: Այդ պատճառով Բաքւի սօցիալ-դեմոկրատական և սօցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնները [illegible] մի Թռուցիկ միօրեայ ընդհանուր գործադուլը բողոքելու այդ կարգադրութեան դէմ, որովհետև 11 նաւաստիները անմեղ էին: Թռուցիկում չէր նշանակված գործադուլի օրը, որովհետև յայտնի չէր, թէ երբ տեղի կունենար դատը: Երբ յայտնվեց, որ դատը տեղի է ունենալու ամսի 5-ին, Բագւի բոլոր յեղափոխական կուսակցութիւնների, և՛ դեմօկրատ, և՛ յեղափոխական, և՛ ուրիշ կուսակցութիւնների կողմից վաղ առաւօտեանից մարդիկ ման եկան թէ քաղաքում և թէ շրջակայքում՝ հրաւիրելու ազգաբնակութիւնը բողոքի, ընդհանուր գործադուլի: Դրա համեմատ այդ օրը բոլոր գործարանները, հանքերը, ֆաբրիկները, մագազինները, խանութները, ձիաքարշը և նոյնիսկ կառքերը գործադուլ արին: Փակ էին և բոլոր հիմնարկութիւնները, բացի կառավարչականներից. սակայն Բագւի վերին թաղը, որ ամբողջապէս մահմեդականներով է բնակված, չէր մասնակցում գործադուլին: Այդ օրը և իսլամական տօն էր, բայց նոյն իսկ տօնը չէր պահված:

—

Բագւում, Թաղիևի Թատրոնում, այսօր տեղի է ունենալու մի Թուրքերէն ներկայացում ի նպաստ Շուշու Թուրք աղքատներին: Պէտք է խաղան Նէրիման Նէրիմանովի «Նադիր-Շահ» դրաման, որը վերցրած է Թուրքական կեանքից.

—

Թելաւի գաւառապետ Կարախանովը հեռացվում է իր պաշտօնից:

—

Թիֆլիսի ելէքտրաքարշի վերատեսուչ նշանակված է Րիգայում նոյն պաշտօնը վարող Ֆելդմանը:

—

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան համագումարը կը կայանայ Ստոկհոլմում և ոչ Հէլսինգֆորսում, ինչպէս առաջ ենթադրում էին կենտրոնական յանձնաժողովում:

—

«Новое Время»-ի ասելով օգոստոսի 31-ին Պետերբուրգի համալսարանի դիւանատունը յայտնեց, որ ընդունվել են 150 կանայք իբրև կողմնակի ունկնդիրներ և 400 հրէայ ուսանողներ:

—

Կոմս Վիտտէն սեպտեմբերի 20-ի մօտերքը կը ժամանէ Պետերբուրգ, և «Петер. Газ.»-ի ասելով, մի քանի օր Պետերբուրգում մնալուց յետոյ, կուղևորվի Կովկաս:

—

«Сегодня» լրագրի ասելով ներքին գործերի մինիստրութեան դիւանատան կառավարիչ Կնոլլը ներքին գործերի մինիստրի օգնական է նշանակվում: Ինչպէս յայտնի է, Կնոլլը մեն. Ստոլիպինի Սարատովի նախկին աշխատակիցն է:

—

Օգոստոսի 30-ին, Պետերբուրգում, գլխաւոր զինւորական դատախազ Պաւլօվը զինւորական մինիստրի հրամանով զօրքերի հրամանատարներին և նահանգապետներին հրահանգ է ուղարկել, որի մէջ ասված է, որ զինւորա-դաշտային դատարանի նախագահ և անդամներ կարող են լինել միմիայն զօրամասերի օֆիցերները և ոչ մի դէպքում ոչ զինուորա-դատարանային վարչութեան պաշտօնեաները:

—

Բեռլինից հաղորդում են «Страна» լրագրին, որ այնտեղ ծանր հիւանդութիւնից մեռել է վիպասան, սօց.-յեղափոխական կուսակցութեան յայտնի անդամ Գօցը: Դա այն Գօցն է, որի Նէապօլում բանտարկելը իտալական պարլամենտում հարցապնդման յարուցեց, այն պատճառով, որ ռուսաց կառավարութիւնը պահանջել էր յանձնելու Գօցին:

—

Բուլղարիայում հրատարակվող «Դունա»—Դունայը Թուրքերէն Թերթը հաղորդում է մի լուր, որը ցոյց է տալիս թէ ինչ ստորութիւնների ընդունակ է ժամանակակից յունական հոգին: Յիշեալ Թերթի համաձայն, յոյները ցանկացել են Կարմիր Գազանի առողջութեան համար մաղթանք և աղօթք կարդալ յունական եկեղեցում, բայց Բ. Դուռը չէ ընդունել:

—

Սև հարիւրեակային հրաբորբոք գործիչներից մէկը—ռուս ժողովրդի դաշնակցութեան Քիշնևի բաժնի նախագահի օգնական քահանայ Փեզօրովը Վոլօվոյը, մի առաջարկութիւն է արել դաշնակցութեան կոմիտէին, որպէսզի միապետական կուսակցութիւններին չը պատկանող բոլոր քահանաներին հեռացնել քահանայական պաշտօնից և փոխարինել նրանց քաջ հայրենասէրներով՝ ազգայնականութեան մէջ աւելի շուտափոյթ ազդվածներով: Այս նախագիծը անդամների խնդակցութեան ու համակրանքին է արժանացել. արդէն որոշված է այդ առիթով միջնորդութիւն յարուցել Թէմական բարձր իշխանութեան առաջ:

—

«Бирж. Вѣд.» ամենաարժանահաւատ աղբիւրից հաղորդում է, որ Ստոլիպինի կաբինետը հողային հարցում չէ բաւականանում սոսկ օգ. 27-ի ուկազով, այլ ուղաւորդում է կրկին մի շարք բարենորոգումներ: Երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչը մտադիր է կայսերական հողերից գիւղացիներին բաժին հանել: Գիւղացիական բանկին տրված են ամենալայն հրահանգներ, որով այս հարցում արժանապէս պէտք է հեռացվեն «կանցելարիական» ամեն տեսակ ձգձգումները:

—

Դիւանագիտական շրջաններից «Бирж. Вѣд.»-ին հաղորդում են, որ Պետերբուրգում գտնվող օտարազգի մեծ պետութիւնների ներկայացուցիչների միջև երկրի դրութեան մասին մտքերի փոխանակութիւն և խորհրդակցութիւններ են սկսվել: Անհրաժեշտութիւն է առաջադրվում նպաստել վերջին դէպքերից վնասված օտարազգիներին:

—

Սեմինարիայի վարչութիւնը իրաւունք է տալիս ընդունել սեմինարիայի հինգերորդ դասարան, առանց քննութեան ենթարկելու, այն անձանց, որոնք աւարտել են կլասիքական գիմնազիայի, ռէալական դպրոցների և համապատասխան աշխարհիկ դպրոցների դասընթացքը:

—

Կրօնշտադտում զինուորական ապստամբութեան գործը քննող ժամանակաւոր զինուորական դատարանի նիստերը յուլիսի 19-ից տեղի են ունենում անընդհատ, առաւօտեան ժամը 9 $1/2$-ից մինչև գիշերվայ ժամը 12-ը. դատարանի անդամները ապրում և ճաշում են նոյն շինութեան մէջ, ուր կայանում են դատարանի նիստերը:

—

Ինչպէս երևում է Սէզլէցից եկած ականատեսների ցուցմունքից, օգոս. 30-ին սպանվածների թիւը 143 է եղել, իսկ վիրաւորվածներինը՝ 500: Շատ սպանվածներ գտնվում են այրված և կործանված շինութիւնների փլատակների տակ: Դէպքերի ազդեցութեան տակ գաղթականութիւնը վերսկսվել է նոր փութով:

(Ռ. Հ. Գ.)

—

Մոսկվայի քաղաքապետը հրամայել է՝ միջնակարգ դպրոցների շինութիւններում արգելվի քաղաքական հարցերի վերաբերմամբ ժողովներ գումարելը:

—

Լեհական սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան նշանակած ընդհանուր գործադուլը յետաձգված է մի քանի օրով: («Баку»)

—

Ինչպէս հաղորդում է «Пет. Газ.» լրագիրը Պ. Ա. Ստոլիպինը արտասահման է մեկնելու սեպտ. սկզբներին: Տիկին Ստոլիպինան իր երեխաների հետ կը մնայ արտասահմանում մինչև գալիք տարվայ գարունը: («Б.»)

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Գանձակի նահանգապետը իրաւունք է տուել Սերգէյ Սարգարեանին, համաձայն տիրապետող օրէնքների, բանալ տպարան Գանձակ քաղաքում «Просвѣщеніе» անունով: Տպարանը բանալուց յետոյ նոյն տպարանում պիտի տպագրվեն մօտ ապագայում երկու օրաթերթեր՝ մէկը «Волна», միւս «Շղթայ» անունով, պ. Սարգարեանի խմբագրութեամբ: «Շղթայի» պատասխանատու խմբագիր կը լինի պ. Սահակեան: Թոփալհասանլու գիւղի մօտ անհետացրած չօվդարեցի պատանուն աջողվում է փախչել և ազատվել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թեհրան, օգոստոսի 19-ին

Մայրաքաղաքիս հայութիւնը 3—4 շաբաթից աւելի է, որ կտրված է արտաքին աշխարհից, մանաւանդ իր հարևան Կովկասից: Թէ ինչեր են պատահում ու անցնում մեր մերձաւորից դուրս, այդ չը գիտենք, որովհետև բոլոր հայ Թերթերը գրաւված են և փոստատան [illegible] ծառաների ձեռքով ծխախոտ վաճառողների խանութներում են սպառվում: Հայ Թերթերի գրաւման մասին Թեհրանի հայ հասարակութիւնը երկու անգամ արդէն դիմում է արել ուր հարկն է: Խոստացվել է որ Վ. Շահից առանձին Թոյլատւութիւն ստացվի այդ մասին:

Ինչպէս երևում է, խաւարարարները հայ Թերթերի մասին սատանայական գաղափարներ են տուել պարսից կառավարութեան: Թէ՝ «հայ Թերթերը Պարսկաստանի հայ ժողովրդին քնից արթնացնում են, նրանց մտքերը պղտորում են, ապստամբեցնում են» և այլն և այլն: Ցաւալին այն է, որ մեր բարեխնամ կառավարութիւնը առանց քննելու լսում և հաւատ է ընծայում այդպիսի խաւարարների բարբանջանքներին: Հայ Թերթերը ոչ թէ վնասակար են, այլ մանաւանդ Պարսկաստանի շահերին են պաշտպանում ու միշտ հայ և պարսիկ ժողովրդի մէջ համերաշխութիւն ու եղբայրութիւն քարոզում.—Հոգևորականները Թեհրանի համայնքից մինչև այժմ երկու անգամ ընդհանուր ժողով է տեղի ունեցել, ուր ներկայ են եղել մինիստրները, հոգևորականները և ժողովրդի բոլոր դասակարգից: Ամսիս 18-ի ժողովին հայերից էլ կար մի հոգի. Ժողովում կարդացվեց [illegible] ընտրութիւնների կանոնագրութիւնը, որի մի քանի յօդուածները ընդունվեց և միւսները փոփոխութեան տրվեց: Ժողովում խօսեց սէյիդ Աբդուլլա-Մուջտեհիդը: Մանրամասնութիւնը յետոյ:

Մ. Մ.

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

—

Լոնդոն, օգոստոսի 29-ին

Անցած հինգշաբթի քսան քայլ հեռաւորութեամբ, գիշերվան 9 ժամին հրդեհ կար:

Բազմութեան հետ ինքս վազեցի ու խուռն բազմութիւնը մի կերպ ճեղքելով, կեցայ աւելի մօտ: Ծուխը կրակի բոցերի հետ քուլայ քուլայ վեր էր բարձրանում: Րոպէապէս հրդեհաշէջ թէև սկսաւ իր արագաշարժ գործողութիւնը:

Բայց իմ միտքը աւելի մագազինի տիրոջ, ու վերնայարկում ապրողների վրայ էր: Ահա այդ մտքերի հետ էի, չանցաւ տասը րոպէ, արդէն լափող կրակը չը կար, մի քանի րոպէ էլ հրդեհաշէջ խումբը պատրաստվեց գնալ: Ե՛հ, ասեցի ինքս ինձ. երջանիկ մարդ, որ այստեղ էիր. եթէ մեզանում կը լինէիր, նախ ապրանքիդ կէսը «խիւրս» կը լինէր, և մնացածն էլ քեզանից վեր, հինգ յարկ տան հետ մոխիր դառնար, և գուցէ մի քանի հարևան տուն էլ հետը:

Մոռացայ ասել, որ երբ կրակի բոցերը երկինք էր բարձրանում, վրայի ու կողքի հարևանները գլուխնին պատուհաններից հանած սառնութեամբ դիտում էին: Էլ ինչպէս չը մտածէի, թէ սրանք խելագարվե՞լ են, ինչ: Ինչո՞ւ են կեցած, ինչո՞ւ չեն փախչում և կամ օգնութիւն բղաւում:

Հրդեհի հանգելուց յետոյ գլխի ընկայ թէ բանը ինչումն էր:

Հիմա եկ հրդեհից յետոյ մի մտածիր, թէ այս հազարաւոր բազմութիւնը մինչև ոստիկանութեան ցրվելը, քանի քանիներ ոտի տակ պիտի գնան, և որքանների քիթ ու երես պիտի ճխլվի: Բանը նրանում է, որ այս խեղճ ոստիկանները, գէթ այսպիսի դէպքերում, էլ ոչ հրացան ունեն, ոչ Թուր, ոչ ատրճանակ և ո՛չ էլ գէթ մի կտոր փայտ: Բայց ինչ եմ տեսնում, Տէր Աստուած, հաւատամ աչքերիս, թէ երազ համարեմ: Ոստիկանների մտերմական քաղցր ժպիտը և իւրաքանչիւր մէկ ձեռքի նշանը կատարվում էր հին պարսից ու մարաց օրէնքների պէս անխախտ:

Երբ ապուշի պէս շուրջս կատարված բաների վրա էի մտածում, ու իմ ամբաղդութիւնը ողբում, գլուխս վեր բարձրացնելով՝ լայնարձակ փողոցը գրեթէ դատարկ գտայ: Մէկ հոգոց քաշելով, ուզեցի բարձր ձայնով բոռալ—բաղդաւոր երկիր, երջանիկ ժողովուրդ, բայց վախեցայ թէ բռնեն ու բանտ գցեն, գլուխս քաշ արած հեռացայ:

Ն. Շ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսկաստանից եկած անձինք հաղորդում են, որ, իսկապէս, յեղափոխական շարժումն չը կայ Պարսկաստանում: Շարժումը գլխաւորապէս Թէհրանի մէջ է և նրա գլխաւոր պարագլուխները հոգևորականութիւնը և բուրժուազիան են: Այդ պատճառով էլ խոստացված սահմանադրութիւնը կարող է շատ պահպանողական կերպարանք ստանալ: Ռուսաց լրագիրները հաղորդում են, որ Շահի հաստատած յանձնաժողովը մշակել է արդէն ընտրական կանոնները, որոնց համաձայն պատգամաւոր կարող են ընտրվել 30—70 տարեկան անձինք, գրագէտ, դաւանող պետական կրօնը, այսինքն իսլամ և չը պատկանող ոչ մի աղանդի: Պատգամաւորների թիւը—200 է: Պարսկաստանը բաժանված է 11 շրջանների: Թէհրանը միակ մի շրջան է կազմում: Սակայն Շահը չէ հաստատում այդ կանոնադրութիւնը և ընկել է նորից պալատական կուսակցութեան ազդեցութեան տակ, որ համոզում է նրան պահպանել հին րէժիմը: Թէհրանում նորից յուզմունքներ են տիրում: Վերանորոգման կուսակցութեան հետ ունեցած բանակցութիւնների պատճառով, վերջինս խոստացաւ հաստատել կարգը այն պայմանով, որ Պարսկաստանից աքսորվեն Աթաբէկը, պալատական մինիստրը, Թէհրանի նահանգապետը, որոնք րէֆօրմների հակառակորդներն են: Շահը չը համաձայնեց, ուստի օգոստոսի 28-ին բազարները փակվեցին և խռովարարները նորից ապաստանեցին անգլիական դեսպանատանը:

Վերջին հեռագիրները յայտնեցին սակայն, որ Շահը հաստատել է կանոնադրութիւնը և համաձայնութիւն տուել աքսորելու Աթաբէկին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 սեպտեմբերի

ՄՈՍԿՎԱ, 3 սեպտեմբերի: Մօսկվա-Կիէվ-Վօրօնէժ ճանապարհին ընդհարվեցին ապրանքատար գնացքները: 10 վագօն ջարդված են, 15 փչացած. վիրաւորված են տոմսակ չունեցող մի քանի ճանապարհորդներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 սեպտեմբերի: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը խնդրամատոյց է եղել թոյլատրելու բարձրագոյն կրթութիւն ունեցող կանանց միջնակարգ դպրոցներում առաջին չորս դասարաններում դասաւանդելու բոլոր առարկաներից, ոչ թէ միայն նոր լեզուներից՝ ինչպէս առաջ էր:

ՕԴԷՍՍԱ, 5 սեպտեմբերի: Բազարնայա փողոցում երկու երիտասարդ մարդիկ սպանեցին քաղաքապահին: Նրանց հետապնդման ժամանակ սպանվեց մի դռնապան և ծանր վիրաւորվեց մի ուրիշ քաղաքապահ: Հրակողներից մէկը ծանր վիրաւորվեց և յայտնվեց, որ բանտից փախած քաղաքական կալանաւոր Թարչէն է. միւսը անյայտացաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 սեպտեմբերի: Պետերբուրգի մօտ 150 հազար գործաւորների պրօֆէսիօնալ դաշնակցութիւնների մէջ կազմակերպելու գործը արդէն վերջացել է: Իւրաքանչիւր շուկայից և առևտրի առանձին տեսակներից ընտրված են կօմիտէտներ աւտօնօմ սկզբունքների վրա, որոնք մտնում են գործաւորների դաշնակցութեան մէջ, որը միացնում է իր մէջ արդիւնաբերական հիմնարկութիւնների ծառայողներին:

7 սեպտեմբերի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 սեպտեմբերի: Ժողովրդական ազատութեան կուսակցութեան համագումարը չթոյլատրելու՝ և կուսակցութեան կարգաւորելու խնդիրը մերժելու նկատմամբ—ընդդիմադիր մամուլի՝ կառավարութեան վրա շարունակ յարձակումների առիթով—«Россія» լրագիրը իր մի առաջնորդող յօդուածում ասում է, որ մտածած համագումարը իր ձևով և նշանակութեամբ հանդիսանում է ոչ թէ համագումար այս բառի իսկական մտքով, այլ քաղաքական միտինգների հետևողական մի շարք, միտինգների որոնց կազմակերպութիւնը կարիք չունի առանձին միջնորդութեան: Կուսակցութիւնը հասկանում էր, որ մտածած համագումարը եթէ մինիստրը թոյլատրէր նրան, աւելի շուտ կը հասնէր նպատակին, եթէ միայն իր դատողութիւնների և գործողութիւնների մէջ հպատակվէր գոյութիւն ունեցող օրէնքներին: Նրանք այդ ամբողջ համագումարը կազմում են իբրև բողոք գոյութիւն ունեցող օրէնքների դէմ: Կուսակցութիւնը ցանկանում էր առնել կառավարութեան համաձայնութիւնը՝ կազմակերպելու բացարձակ յեղափոխական ագիտացիա, Վիբօրգի կոչի ոգով: Կառավարութիւնը անկեղծ և հաստատուն կերպով յայտնել է և յայտնում է իր անյողդողդ մտադրութեան մասին—համակերպվել հասարակական առողջ և ազատ կարծիքի հետ, որը, սակայն, ոչ մի տեղ և երբեք չէ նմանվում յեղափոխական ագիտացիայի: Նոյն չափով տենդէցիօզ են նաև ընդդիմադիր մամուլի՝ մերժման հարցի մասին արած դատողութիւնները՝ մատնանշելով և հաւատացնելով, որ իբր այդ մերժումը հանդիսանում է կառավարութեան քաղաքական ինչ որ բարձր ենթադրութիւնների հետևանք: Որով անտես են առնում այն փաստը, որ կանոնադրութիւնը ներկայացրված է ոչ թէ բարձր կառավարութեան այլ նահանգական վարչութեան, որը իր կողմից մերժեց կարգաւորելու և կանոնաւորելու, պատճառաբանելով, որ կուսակցութիւնը հեռանում է իր կանոնադրութիւնից և օրէնքից: Իբրև ապացոյց, որ նահանգական վարչութիւնը չէր առաջնորդվում քաղաքական բարձր ենթադրութիւններով, կարող է ծառայել միաժամանակ մերժումն հոկտեմբերեան քաղաքական կազմակերպութիւնների կանոնաւորումը, որը ինչպէս և ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը չէ հետևում յեղափոխական նպատակների:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 սեպտեմբերի: [illegible] սեպտեմբերի 3-ին հեռագրեց ներքին գործերի մինիստրին. «Երէկ Խարկովում կայացաւ ժողովրդական ազատութեան կուսակցութեան ժողովը: Ժողովը թոյլատրեցի այն պայմաններով, որ Վիբօրգի համագումարի մասին չը խօսել և չը թոյլատրված համակայսերական համագումարի համար պատգամաւորներ չընտրել: Հաւաքվեց 10 հոգի: Մի քանի հարցերի քննութիւնից յետոյ ժողովում սկսվեց, հակառակ կարգադրիչների տուած ստորագրութիւնների, Վիբօրգի համագումարի մասին վիճաբանութիւններ. այդ ժամանակ իմ կողմից նշանակված պաշտօնեան նախագահի ուշադրութիւնը հրաւիրեց այդպիսի վիճաբանութեան ապօրինութեան վրա. նախագահը հրաժարվեց իր կողմից և ներկայ եղողների մեծամասնութեան կարծիքով յայտարարեց ժողովը փակված: Ժողովուրդը խաղաղ ցրվեց»:

ՎԱՐՇԱՎԱ, 6 սեպտեմբերի: Առաւօտեան Կօշկօվեան փողոցում անյայտ չարագործների ձեռքով սպանվեց՝ երրորդ գվարդիական թնդանօթաձիգ բրիգադայի գնդապետ Նիկոլաևը:

ՏԱՇԿԵՆՏ, 6 սեպտեմբ.: Դատաստանական պալատի պրօկուրօր Շարինկին սպանվեց 18 տարեկան ուսանող Բօդրիցկինի ձեռքով, որը մի քանի ժամանակ առաջ գրաւականով արձակված էր բանտից: Իրաւունք ստանալով Շարինկինին, պրօկուրօրի կաբինետում Բօդրիցկին գնդակահարեց Շարինկինին, կտրելով պատուհանը թռաւ փողոց, բայց անցորդները նրան բռնեցին:

ՊԵՐՄ, 7 սեպտեմբերի: Խունգուրայից 20 վերստ հեռաւորութեան վրա կողոպտված է շինվող երկաթուղու գծի արտէլշչիկը: Խլված է 10,000 րուբլի. կողոպտիչները անյայտացան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 սեպտեմբերի: Սեպտեմբերի 2-ին Վօլօգդայի ճանապարհին Սապերնի կայարանի մօտ տեղի ունեցաւ գնացքի խորտակումն, որ դուրս էր եկել Պետերբուրգից գիշերվայ ժամը $11^1/_2$: Ճանապարհը քանդված էր 10 սաժէն: Երկու վագօն շուռ եկան, երրորդը ծռվեց կողքի վրա: Գնացքով գնում էր արտէլշչիկը, որը տանում էր 25,000 րուբլի: Ջանր վիրաւորներ չը կան: Ծարդված են 15 ճանապարհորդներ: Չարագործները գտնված չեն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 սեպտեմբերի: Տեղի ունեցաւ գեներալ-մայոր Տրեպօվի թաղումը Պետրոս և Պօղոս մայր եկեղեցու գաւթում:

ԽԱՐԿՈՎ, 6 սեպտեմբերի: Գիշերը Ուրալ քաղաքի արուարձանում աղիւսագործարանատէր Վացէնկօն, որը նստած էր իր բնակարանում կնոջ և երկու գրասենեկապետների հետ, մահացու կերպով վիրաւորվեց հրացանի գնդակով:

ՄՈՍԿՎԱ, 6 սեպտեմբերի: Դօմօկօվսկի փողոցում, Բուլթաէվի տպարանում 10 զինված մարդիկ կապելով տպարանի տիրոջ և գրաշարներին, տպեցին սօցիալ-դեմօկրատների կուսակցութեան կոչը: Տպագրումը տևեց 3 ժամ, որից յետոյ անյայտ մարդիկը անյայտացան: Մօսկվայի համալսարանում ուսանողների ընդունելութիւնը վերջնականապէս դադարեցված է:

ՎԱՍԻԼԿՈՎ, 5 սեպտեմբերի: Մաքսային շրջանի հարկահան Լէօնտօվիչը Բէլիցերկվում յայտնեց ոստիկանութեան, որ իրանից խլեցին 12,000 րուբլի, որը նշանակված էր գանձատուն ուղարկելու համար: Լէօնտօնովիչի յայտնումը հանդիսացաւ մտացածին: Ամբողջ գումարը թագցրել էր իր տան վերնայարկում: Լէօնտօնովիչը կալանաւորված է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 սեպտեմբերի: Պաշտօնապէս հերքվում են լրագիրների տարածած այն լուրերը, որ իբր թէ կառավարութիւնը յատկացրել է 300,000 րուբլի իր մարդկանց անցկացնելու Պետական Դումայի համար:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱԻՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժու. ևն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ի. Կ. ԳՋԷԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1 2 ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1 —2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:

ՆՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ց. Գուրգենօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան:
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Խ. Գ. ԱԲԵԱՆՑ—7—$7^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.:
Վճարը 50 կ.: Աղքատները ձրի: Համախորհրդի (գօնսուլիւում) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԴՊՐՈՑ
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Երկու սեռի մանուկների համար: Ընդունելութիւնը սկսված է, ուսումը՝ սեպտեմբերի 6-ից. Բեհբութեան փող. սեփ. տ. 25:
(սեպ. 2, 3, 5, 6, 8, 10, 14, 17) 4—8

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց

Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 12—2, երեկոյեան 6—8: Սոլոլակ, անկին Բէհբութեան և Պասկեվիչի փողոց, № 33/15; (ա. օ.) 3—100

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլէկտրօ-բուժութիւն:
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՒՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԻԲԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՑԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և նանասուների (КОРМИЛИЦА) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից:
(չ.ու.կ.) 88—100

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւնների: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
(կ.չ.ու.) 47—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (ե.ռ.) 100—100

ԲԺԻՇԿ
Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, մասնաւորապէս կրծքի:
Քննութիւն և բուժումն X ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7:
Քսէնիէվսկայա փող. տ. № 7 (Վէտցելի հիւանոցի մօտ): 18—30

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնօվի № 7. պօղեզ նոտար Միքերօվի:
(ե.հ.չ.) 50—100

ՀՐԱՒԷՐ

Հոգևոր իշխանութեան հրամանի համաձայն ամսիս 10-ին, կիրակի, առաւօտեան ժամի 11-ին, Շամքօրեցոց ս. Աստուածածնայ եկեղեցու երկսեռ ծխականք հրաւիրվում են նոյն եկեղեցին նոր երեցփոխանի ընտրութեանը մասնակցելու:
Ցամագասպ աւագ քհ. Տէր-Յովհաննիսեանց
(հ. ու. չ.) 2—3

Մի երիտասարդ, որը աւարտել է Երևանի թեմական դպրոցը յոյժ գովելի վկայականով, փնտռում է իրան յարմար գործ: Հասցէն՝ Тифлисъ. Авлабаръ, 7 уч. Вахтангская ул. мелочная лавка Гавріелянцъ. Передать Вагану Аршарунянцу. 2—2

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ, ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
(Баку—пассажъ Лалаева)

Մանկական պարտէզ ընդուն. երեխ. 5—7 տ.
Ուսումնարան » » 7—9 տ.
Երեխաները պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար: 2—10

ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
Մաթեմատիկոս և պատմաբան
(Լազարեան ճեմարան աւարտած)

Ցանկանում են ուսուցչական պաշտօն ստանալ հայոց դպրոցներում: (Ցանկալի է միևնոյն տեղում): Դիմել՝ Москва, Мал. Харитоновскій пер., д. Котова, кв. 10.
9—10

Քաղաքից մեկնելու պատճառով մինչև սեպտեմբերի 8-ը վաճառվում են էժան և ընտրութեամբ՝

ՄԵՂՐԱՃԱՆՃԵՐ

փեթակներով: Ելիզավէտինսկայա փողոց, տուն № 130, Վ. Ա. Սաքօ.

ՋԵՌՆԱՐԿ ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

դասագրքերիս գները պակասեցնելու մասին ինձ եղած դիմումները ամենայն ուրախութեամբ յարգելով՝ յայտնում եմ, որ սոյն յայտարարութիւնից յետոյ միայն, և ոչ մինչև այժմ, աշխատութիւններս վաճառվելու են Թիֆլիսի Կենտրոնական, Կովկասեան և Գուտենբերգ գրավաճառանոցներում հետևեալ գներով:

«Ջեռնարկ»	Ա. տարի. փոխանակ 60-ի՝	45 կ.
	Բ. տարի. » 40-ի՝	25 »
	Գ. տարի. » 40-ի՝	25 »
«Մի պտոյտ»	փոխանակ 40-ի՝	30 կ.
«Բարի մայր Մարիամը»	վէպիկ 20-ի՝	15 կ.

Արսէն ա. քահ. Բագրատունի
(օգ. 18, 24, 29 սեպտ. 3, 8, 12) 5—6

Շուտով լոյս կը տեսնի
Ստեփան Մելիք-Սողոմոնեանցի
„ՄՐԵԱՆ ՁԱՅՆԵՐԻ“

երկրորդ տպագրութիւնը՝ բարեփոխված և լրացրած:
Պահեստներ՝ Թիֆլիս՝ Գուտտենբերգ, Բագու՝ Ղազանչեան, Վլադիկավկազ՝ Գիւրջեան, Երևան՝ «Արարատ» գրավաճառանոց, Կարս՝ եղբայր Մկրտումեանների գրավաճառանոց:
Տպագրվում է Թիֆլիս, «Հէրմէսում»:
Միւս բոլոր հրատարակութիւնները կեղծ են: առ. (ու. կ. ե. հ. չ.)
1—5

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ԻՎ. Զ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Դասընթացքներում ընդունելը երկու սեռի անձանց մինչև սեպտեմբերի 11-ը. վճարը 45 րուբլի. իսկ աւարտելը ատտեստատներով յունվարին: Тумановская, соб. д. № 13.
(ու. կ.) 1—2

Ս. Պետերբուրգի հայ ուսանողութեան հրատարակութեամբ
Լոյս է տեսել
և վաճառվում է
„ԼՃԻ ՏԱԿ“
յայտնի վէպի Բ.-րդ հատորը:
Լրիւ թարգմանութիւն:
Գինն է 50 կոպ.

Ցանկացողները կարող են դիմել՝ Թիֆլիս, «Գուտենբերգ» գրավաճառանոց:
ե. հ. չ. 3—3

Եղեւիայի ծխական դպրոցի համար արդէն վարձված են ուսուցիչներ. պատասխան չը ստացողներն ազատ են:
Ի դիմաց հոգաբարձութեան՝
աւագ ուսուցիչ՝ Վլաս Վլասեանց

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ
ԱՐԻՒՆԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
Դրամատիկական անցք մի գործող.
Հեղ. Պ. Հ. Լուազօնի
Թարգմ. ֆր. Տ. Ջաւէն
Դիմել՝ «Գուտտենբերգ» գրավաճառանոցին:
5—5

Յովհաննէս Դաւթեանի
հրատարակութեամբ
Լոյս են տեսել

№ 5. Մօպասան, «Մի կեանք», Թարգմ. Ս. Տ.-Անանեան . . . . 1 ր.
№ 6. А. Агароньянъ, «Кусочекъ хлѣба», «Петухъ» Թարգմ. Վ. Բաբեեան . 10 կ.
№ 7. Անենսկայա, «Հանրապետութիւն» Թարգմ. Ս. Տէր-Անանեան . 5 կ.
№ 8. Ա. Բէբէլ, «Քրիստոնէութիւն և Սօցիալիզմը» Թարգ. Ս. Տէր-Անանեան 10 կ.
Շուտով լոյս կը տեսնեն՝
№ 9. »Զիւցերիս»
№ 10. «Կորչեն Սօցիալ-Դեմօկրատները»:
Դիմել հրատարակչին՝ Армянскъ, «Тавр. губ.) Ивану Давидову և Կովկասի յայտնի գրավաճառներին:
3—6

Արէշի գաւառի կրկնակի աւերված Նեմեթապատ գիւղից, Ներսիսեան դպրոցի աշակերտ Քրիստափոր Մատինեանը, ծայրայեղ չքաւորութիւնից ստիպված է՝ հակառակ իր բուռն ցանկութեան՝ թողնել դպրոցը, եթէ մի բարերար ձեռք չը փութացնի իր աջակցութիւնը: Հրաւիրում ենք բարերարների ուշադրութիւնը: Հասցէն՝ Тифлисъ, Семинарія Нерсесянъ, уч. IV-го кл. Христофору Матинянцу. 2—2

Տպագրվում է
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
Հայ կտրիճները
Պատկեր հայ-թուրքական կռիւներից,
24 երես
Գինը 7 կոպէկ:

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտենբերգ» գրավաճառանոցը կամ հեղինակին՝ Հալաբար, Լազարեվսկայ, տուն Մուրադօվի: 100-ից պակաս հեղինակին չը դիմել: 100—300 օր. պահանջողներին 22% զեղչ, 300-ից աւելի 26%: Ճանապարհածախսը պահանջողի հաշուին:
(և. հ. չ.) 3—5

Լոյս տեսաւ առաջին ապագրութեամբ
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ
Ուսումն մայրենի լեզւի
Չորրորդ գիրքը
Գինն է 90 կոպէկ:

Գլխաւոր պահեստը՝ «Գուտտենբերգ» գրախանութում, ուր վաճառվում են և առաջին, երկրորդ և երրորդ գրքերը: Հարիւրից ոչ պակաս գնողներին 25% զեղչ է լինում: Յօբելինողի հասցէն՝ Лермонтовская № 4.
5—10

Մակար Տէր-Սարգսեանի
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Գինը 30 կոպ.
ԴԱՍԱԳԻՐՔ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ
Գինը 50 կոպ.
Уроки чистописанія
Գինը 25 կոպ.
100-ից ոչ պակաս գնողներին 20% զեղչ:
Դիմել՝ Թիֆլիս—Կենտրոնական գրավաճառանոցին: Երևան՝ յօրինողին:
9—10

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով):

	Փոստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր.
Կարսից »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր.
Ալէքսանդրապօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր.
Ալէքսանդրապօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր.

ԶՈՒԹԱԿԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Մ. Տ. ՎԱՍԻԼԵՎԻ

Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 1-ին և վերջը յունիսի 1-ին
Ուսման տարվայ վճարն է 90 րուբլի 2 կիսամեակներով

Ընդունելութիւնը օգոստոսի 29-ին, ամենայն օր, ցերեկվայ 10—1 ժամը և երեկոյեան 5—$7^1/_2$ ժամը: Грибоедовская, 5
(ա. օ.) 9—10

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կաղեթսկայա փողոցի, տուն Թամշեանի: Մուտքը Կաղեթսկի փողոցից № 2.
(ա. օ.) 227—300

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, уголъ Красноводск. и Меркурьевск. д. Набатовыхъ)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա:
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայնօր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը:
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Те ъ-Каспарову.
(ե. չ.) 17—30

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
դասագիրք ստորին դասանների համար
յօրինեց Մ. ԱԲԵՂԵԱՆ, ուսուցիչ ս. Էջմիածնի Գ. ճեմարանի
Գինն է 75 կոպէկ:

Դպրոցների համար, եթէ անմիջապէս հեղինակից առնուան 25 օրինակ գնելու 75 կոպէկի տեղ 50 կոպէկ: Ճանապարհածախսը (25 օրինակի համար պոստի փաթեթով րուբլի) գնողների վրա է: Պէտք է վճարել կանխիկ, կամ պատուէր տալ վերադիր վճարով: Պատուէրներն անյապաղ և ճշտութեամբ կը կատարվեն: Դիմել՝ Эчміадзинъ, Академія, нуку Абегянъ, կամ Թիֆլիսի գրավաճառներին:
(ե. հ. ու. կ.) 12—2

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ., տուն № 24/4.)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն: Դասընթացքը աւարտողներին տրվում են ատեստատներ: Առարկաներն են. 1) առևտրական տնտեսութիւն (քաղաքական տնտեսութիւն). 2) հաշուապահութիւն (պարզ, իտալական, բանկային և գործարանային). 3) առևտրական թուաբանութիւն. 4) կանոնադրութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) առևտրական թղթակցութիւն. 6) թուաբանութիւն համրիչի վրա. 7) վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղել): Առարկաները ուսուցանվում են Վիէննայի առևտրական ակադեմիայի ծրագրով: Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.: Կուրսերին կից բացվում են

ԿՈՒՐՍԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
(Գերմաներէն, Ֆրանսերէն եւ Անգլիերէն)

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 1-ից ամենայն օր երեկոյեան 4—7 ժամը: Ծրագիրը և կանոնները ուղարկվում են և տրվում են ձրիապէս կուրսերի հիմնողի բնակարանում
Առևտրական գիտութիւնների կանդիդատ Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆ
(ե. հ. չ.) 8—10

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում:

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում:
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաների աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія):
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան: Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ: Ծրագիրն ուղարկվում է ձրի:
Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատտեստատներ:
Դրանից անկախ, բացված է բիչ պատրաստութիւն ունեցող անձերին ամառ առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար:
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր:
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին առանց պոստի ծախս վճարելու. Գինն է 3 ր. 50 կոպէկ: (չ. ու. կ.) 3—6

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Լերմօնտօվսկայա փողոց, № 15)

Ցանկացողները, ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին՝ Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն և ունեն Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, օրինաւոր ատտեստատներ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Կուրսեր ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսերն հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիները դիմում են ТИФЛИСЪ учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. չ. 1 անգ. (ու.) 9—12